

14.589

# Մ. Ի. ԿԱԼԻՆԻՆ

ԻՆՉ ՏՎԵՑ  
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆ  
ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻՆ

ՊԵՏԶՐԱՏ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԿԵՆՏՐԱԼՈՒԹՅԱՆ ՀՐԱՏՈՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐԱԼ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՅԵՐԵՎԱՆ • 1978

32

4-15

32  
4-15

Այ

26 SEP 2006  
1 DEC 2009

Պրոլետարներ բոլոր յեղքների, միացե՛՛ք

Մ. Ի. ԿԱԼԻՆԻՆ

ԻՆՉ ՏՎԵՑ  
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆ  
ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻՆ

ՊԵՏՀՐԱՏ  
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ ● 1938

16 MAY 2013


14589



2 23/78

М. И. КАЛПИН  
ЧТО ДАЛА  
СОВЕТСКАЯ ВЛАСТЬ  
ТРУДЯЩИМСЯ

Армгиз—Издательство политической литературы  
ЕРЕВАН, 1938




Վոչ հեռու ապագայում խորհրդային Միութեան ամբողջ  
ժողովուրդը, տղամարդիկ և կանայք, սկսած 18 տարեկան  
հասակից, հավասար, ուղղակի ընտրություններով, զաղտնի  
քվեարկութեամբ ընտրելու յե իր ներկայացուցիչները ԽՍՀՄ  
Գերագույն խորհրդում:

Ինչոր հանրապետութիւններում, յերկրներում և մար-  
զերում այժմ ծավալվել և նախընտրական կամպանիան: Շու-  
տով սկսվելու յեն Գերագույն խորհրդի պատգամավորու-  
թեան թեկնածուների առաջադրումը և քննարկումը, խոր-  
հրդային Միութեան ժողովուրդների առաջ դրված քաղա-  
քական և տնտեսական պրոբլեմների քննարկումը: Մասնա-  
ների խիստ քննադատութեանը կենթարկվեն իշխանութեան  
վատ աշխատող որդանները և խորհուրդների անպետք աշ-  
խատողները: Պետք և յենթադրել, վոր մի շարք դեպքերում  
մենք կունենանք հակախորհրդային տարրերի յետլսթներ:

Ընդհանուր, ուղղակի և հավասար ընտրական իրավունքի  
հիման վրա՝ զաղտնի քվեարկութեամբ ընտրութիւններն  
ե՛լ ավելի կամրացնեն խորհրդային սոցիալիստական իրա-  
վակարգը:

Նախընտրական ժողովներում միլիոնավոր ընտրողներ  
խորհրդային յերկրի անցած ուղու հանրագումարը կտան:

Իսկ ի՞նչ և տվել խորհրդային իշխանութիւնը ԽՍՀՄ  
ժողովուրդներին իր քսանամյա գոյութեան ընթացքում: Ի՞նչ  
են ձեռք բերել խորհրդային իրավակարգի որով խորհրդային  
Միութեան ժողովուրդները: Ավելի ճիշտ՝ ի՞նչ են ձեռք  
բերել խորհրդային Միութեան ժողովուրդներն իշխանութեան  
խորհրդային՝ ձևի որով՝ կոմունիստական կուսակցութեան  
ղեկավարութեան ներքո:



2253  
38

Քսան տարին մարդկային կյանքի համար փոքր ժամանակամիջոց չէ: Սակայն պետութեան համար, նրա զարգացման համար այդ շատ քիչ է, քանի վոր ժողովրդի զարգացումը շատ ավելի դանդաղ է ընթանում, քան առանձին մարդու զարգացումը:

Յեթե մենք հայացք դրենք Յեվրոպայի և Ամերիկայի ամենից ավելի կուլտուրական ժողովուրդները զարգացման վրա, ապա կտեսնենք, թե վորքան դանդաղ է ընթանում այդ զարգացումը և այն ել նա վոչ միշտ է առաջ ընթանում: Պատմութեան մեջ քիչ դեպքեր չեն յեղել, յերբ ամբողջ ժողովուրդներ դեպրադացիայի յեն յենթարկվել, իսկ յերբեմն ել պատմութեան ասպարեզից լիովին անհետացել են: Բա՛վական է ասել, վոր Չինաստանը մի ժամանակ համարվում էր աշխարհի ամենակուլտուրական պետութիւններից մեկը: Իսկ այժմ: Այժմ Չինաստանը թեպետ և ունի հսկայական տերիտորիա բազմամիլիոն բնակչութեամբ, — այնուամենայնիւ նա հետամնաց յերկիր է, վորին իմպերիալիստական գիշատիչները շահագործում են շահվելու նպատակով և պատանու-պատանու են անում: Ժողովրդի ուղին հետադուրս է համար հարկավոր է դիտենալ նրա սկզբնական դրութիւնը:

Յեւ ահա այդպես ուրեմն, ի՞նչ տվեց խորհրդային իշխանութիւնը ԽՍՀՄ ժողովուրդներին: Յես կարծում եմ, գլխավորը, փճողականը և հիմնականը, վոր տվեց խորհրդային իշխանութիւնը ժողովրդին — այդ այն է, վոր Խորհրդային Միութեան ժողովուրդները, սկսած ամենամեծերից մինչև ամենափոքրաթիւները, վորոնք վոչ-հեռավոր անցյալում յեղել են ծեծկված ու շահագործված, այժմ գարձել են իրենց սեփական բարոյութեան տերը: Նրանք հնարավորութիւն են ստացել կուրու իրենց սեփական բախտը: Չախճախված ու վոչնչացված են շահագործող դասակարգերը և նրանց հետ միասին վոչնչացված են ճշմարտեբերը, գործադրկութիւնը, չքավորութիւնը և մաստաների քայքայումը, վերացված է մարդուն մարդու ձեռքով շահագործելու հնարավորութիւնը: Կուրստեսային դիւրացիութիւնը վոչ միայն ազատված է կուլակների և կալվածատերերի շահագործումից, այլ ապահովված է հողով և ժամանա-

կակից տեխնիկայով: Հին Ռուսաստանը «ժողովուրդների բանա» էր, իսկ ԽՍՀՄ՝ ժողովուրդների բարեկամութեան յերկիր:

Այս բոլորը մի՞թե չի վկայում այն մասին, վոր ԽՍՀՄ բանավորները և դիւրացիները իրենց բախտի միակ տերերն են հանդիսանում: Յեւ վոչ վորքի չի հաջողվել խլել այդ բախտը: Խորհուրդների Յերկրի ամբողջ ժողովուրդը, մեծից մինչև փոքրը, իր բոլոր ուժերը կտա խորհրդային հողի անձեռնմխելիութեան համար, Լենինի—Ստալինի գործի համար, կոմունիզմի հաղթանակի համար: Խորհրդային Միութեան ժողովուրդներն իրենց բախտը պահում են իրենց սեփական ձեռքերում: Նրանց յեռանդից, կամքից, հաստատակամութիւնից, աշխատունակութիւնից և աշխատանքում ցուցաբերվող համատութիւնից է կախված նրանց կյանքի նյութական ապահովութիւնը և կուլտուրական մակարդակի բարձրացումը:

Սա մեծ բարիք է: Յերկրագնդի և վոչ մի ժողովուրդ չունի այդ հնարավորութիւնը: Նա դրկված է դրանից, նա կաշկանդված է կապիտալիստական տիրապետութեան շղթաներով, նա կապիտալիստական հասարակութեան ստրուկն է և գրկված է իր նյութական մակարդակի և կուլտուրական զարգացման ելական փոփոխութիւնների վրա ազդելու հնարավորութիւնից:

Խորհրդային Միութեան բանավորների, դիւրացիների և աշխատավոր ինտելիգենցիայի նվաճումները նրանով ել հենց նշանակալից են, վոր արդիւնք են նրանց համատեղ աշխատանքի: Կուրեկտիվ աշխատանքը, շատացնելով Խորհրդային Միութեան հարստութիւնները, միևնույն ժամանակ բարձրում է նաև ամեն մի առանձին մարդու բարեկեցութիւնը:

Անհատական և կուրեկտիվ շահի այդ դուրսդուրումը, ամեն մի մարդու՝ իր ուժերը լիովին գործադրելու այդ հնարավորութիւնը — Խորհրդային Միութեան ամենահսկայական նրվածումն է:

### ԻՆՉ ՉԵՌՔ ԲԵՐԻՆ ԽՍՀՄ ԲԱՆՎՈՐՆԵՐԸ

Ռուսական բանվոր դասակարգը, համեմատած յեւրոպական բանվորների հետ, ունի սոցիալիզմի գործի համար

մղած պայքարի վոչ յերկար, բայց փառաստանձ պատմությունն: Կապիտալիստական եկոնոմիկայի զարգացումը Ռուսաստանում ընթանում էր ավելի դանդաղ տեմպերով, քան բանվորական շարժման զարգացումը:

Այդ համեմատաբար այնքան ել վաղուց չեր: Յես տեսել էմ այն ժամանակ, յերբ աշխատանքը գործարանում սկսվում էր առավոտյան ժամի 6-ն անց 30 րոպեյին և վերջանում էր յերեկոյան ժամի 6-ին՝ ճաշի համար մեկ ու կես ժամ ընդմիջումով: Ցարիկաներում աշխատանքը սկսվում էր առավոտյան ժամի 5-ին և վերջանում էր յերեկոյան ժամի 8-ին՝ ճաշի և նախաճաշի համար 2 ժամ ընդմիջումով: Բանվորները մեծ մասամբ ապրում էյին բարակի տիպի հանրակացարաններում:

Գործարանային կառավարչության կամայականության դեմ յեղած բողոքները շատ դեպքերում անկադմակերպ բնույթ էյին կրում և հաճախ արտահայտվում էյին վարպետներին ծեծելով: Յերբեմն վարպետների դուխներին տուրակ էյին հազցնում և ձեռնասայակով գործարանի դարբասից դուրս տանում: Վարպետներին ծեծելուն մասնակցող մարդկանց բանվորները չնահատում էյին, վորպես գոյություն ունեցող ճնշման և վարպետի անձնական կամայականության դեմ քաջ բողոքողներ: Հասարակական գլխավոր վայրերը, վորտեղ հավաքվում էյին բանվորները, դարեջրատները, պանդոկներն էյին:

Բանվորի կյանքը ծայր աստիճան հասարակ էր. ուժասպառիչ յերկար աշխատանքային օրը և բնակարանային վատ պայմաններն էյին ռուսական բանվորի բաժինը: Բանվորները համարյա ամբողջ ազատ ժամանակը ստիպված էյին անցկացնել պանդոկներում, դարեջրատներում և թեյարաններում: Բանվորի աշխատավարձը այնքան ցածր էր, վոր հազրով էր բավականացնում բանվորի ընտանիքի կիսամուրացիկ գոյությունը նրանց համար: Մոսկվայի Պրոխորովսկայա մանուֆակտուրայում, վորտեղ աշխատավարձն ամենից ավելի բարձր էր, այն միջին հաշվով հավասար էր ամսական 20 ռուբլի 50 կոպեկի: Այն ժամանակ համարյա ամեն մի ձեռնարկության մեջ կերտվում էր տուզանքների

ծաղրող սխտեմը: Նույն Պրոխորովսկայա մանուֆակտուրայում բանվորներին տուզանում էյին՝

անկարգության համար՝ 50 կոպ.

անանց դրասենյակի գիտության իրեն մոտ վորեւե մեկին գիշերելու թողնելու համար՝ 50 կոպ.

ներքեի դարբասն անցնելու համար՝ 50 կոպ.

բակից բացակայելու համար՝ 50 կոպ.

ժամանակից շուտ վեր կենալու համար՝ 50 կոպ.:

Միքանի «աստվածապաշտ» գործարանատերեր տուզանում էյին բանվորներին նաև «յեկեղեցի չգնալու համար»:

Վարպետների վերաբերմունքը դեպի բանվորները համարյա նահապետական բնույթ էր կրում: Այս կամ այն վարպետի մոտ աշխատում էյին մի գյուղի բանվորներ: Կային ամբողջ արհեստանոցներ, վորտեղ աշխատում էյին մի գյուղի մարդիկ: Յերբ գյուղից նոր աշխատող էր դալիս, հայրենակիցները տեղավորում էյին նրան գործարանում կամ արհեստանոցում, հասկանալի յե, «սիրաշահելով» իրենց համագյուղացի վարպետին համապատասխան վարձատրությամբ՝ նատուրայով կամ փողով: Վարպետը կաշառք էր վերցնում աշխատանքի ընդունել տալու համար, իսկ յերբեմն էլ բանվորներից փող էր ստանում նաև ավելի բարձրացված աշխատավարձի համար:

Կարելի յեր բաղմաթիվ օրինակներ բերել, թե ինչպիսի ստորացումներ պետք է կրեր բանվորը այս կամ այն ձեռնարկության մեջ ընդունվելիս: Կահամանափակվե՞նք այդպիսի օրինակներից միայն մեկով: Ահա թե ինչպես էր կատարվում բանվորների ընդունելությունը «Ռուս-ամերիկյան ռետինի մանուֆակտուրայում» (այժմ «Կրասնի տրեուգոլնիկ»):

«Հավաքագրումը կատարվում էր շաբաթական յերկու անգամ—յերկուշաբթի և հինգշաբթի օրերը: Դիրեկտորը մայթի յերկայնությամբ կանգնեցնում էր մարդկանց և ման էր դալիս, ընտրում էր, ինչպես մագդործն անասուններին նախիրում, նրանց, վորոնք ավելի ամբակաղմ էյին, բարձրահասակ էյին, խոնարհ և հարգալից էյին հարցերում, իսկ դիրեկտորի հետևից—նրա թիկնապահ, ավագ նշող Թրանցը, «Դև» մականունով: Փրանցը գերմանացի յեր, ռուսերեն

չատ վատ եր խոսում, և միայն բղավում եր. «Այստեղ յեկ՝ դե՛, այնտեղ դնա՛, դե՛»: Գեղեն տոմսակ եր տալիս, իսկ «Դե՛ը» ուղարկում եր միջանցքը, վորտեղ վարպետները տնսակավորում եյին կատարում»:

Բայց այն ժամանակ ել արդեն բանվորները մեջ սկսեցին յերևան դալ մարդիկ, վորոնք մտածում եյին բանվոր դասակարգի կյանքի բարելավման ուղիների մասին: Բանվորների պայքարը կապիտալիստների դեմ ընդունում եր ավելի ու ավելի կազմակերպված և համախմբված ընույթ: Բանվորները գործադուլներն ավելի ու ավելի հաճախ եյին զուգորդվում բանվորական շարժման ընդհանուր խնդիրների և նպատակների հետ: Կապիտալիստական իրավակարգի դեմ մղվող՝ բանվոր դասակարգի անհաշտ պայքարում ծնվեց, աճեց և ամրապնդվեց Լենինի—Ստալինի կուսակցութունը, կոմունիստական կուսակցութունը:

Բանվոր դասակարգը վերջին տասնամյակներում նախ քան Մեծ Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխութունը, միքիչ բարելավեց իր դրութունը—կրճատվեց աշխատանքային ուրը, ավելացավ աշխատավարձը, բանվոր դասակարգի վերնախավը հնարավորութուն ստացավ միքիչ ավելի լավ ապրելու: Բայց սրա հետ միասին մեծացավ բանվորի նյութական դրության անկայունութունը: Կապիտալիզմի զարգացման հետ միասին ավելի հաճախակի դարձան ճգնաժամերը, վորոնց ժամանակ հարյուր—հազարավոր բանվորներ դուրս եյին շարտվում գործարաններից ու Փարբիկաններից, գործարանի դարբասների մոտ ավելի ու ավելի յեր մեծանում աշխատանքի պահեստի բանակը:

Ռուսական բանվորն ավելի ու ավելի յեր անապահով պրոլետար դառնում, վորն աշխատելով այսօր, բոլորովին համոզված չեք, թե վաղն ել կաշխատի. ստանալով վորոշ վարձատրութուն այսօր, նա բոլորովին համոզված չեք, վոր վաղն ել նույն վարձատրութունը կունենա:

Համեմատելով այժմյան Խորհրդային Միության բանվորի կյանքը հին ցարական Ռուսաստանի բանվորի կյանքի ու աշխատանքի հետ, մենք տեսնում ենք, թե ինչպիսի անդունդ կա նրանց միջև: Սոցիալիստական Մեծ հեղափոխութունը,

վոչնչացնելով կապիտալիստների և կալվածատերերի տիրապետութունը, արմատապես փոխեց խորհրդային բանվորների կյանքի և աշխատանքի պայմանները: Յե՛վ կյանքի ամենակարևոր բարելավումներից մեկը յես համարում եմ այն, վոր բանվորի գլխին այժմ կախված չե մշտնջենական դամոկլյան սուրը,—բանվորը յերկյուղ չունի, վոր վաղը նա անգործ կմնա: Մեր բանվորների յերիտասարդ և նույնիսկ միջին սերունդն այժմ չի կարող մինչև անգամ մտքով պատկերացնել աշխատանքը կորցնելուց առաջացող այն դժգոհմը, վոր պրոլետարն ունենում եր անցյալում: Նույնիսկ բարձրագույն կատեգորիայի բանվորները, վորոնք համեմատաբար ավելի եյին ապահովված վոչ միայն իրենց աշխատավարձի չափով, այլև նրա մշտականությամբ, նույնիսկ այդ բանվորներն ել յերբեք չեյին ազատվում այն մտքից, վոր ամեն րոպե հնարավոր ե, վոր կորցնեն իրենց աշխատանքը: Առանձնապես ուժեղ եր այդ դժգոհմը ճրջնաժամերի և այսպես կոչված դեպրեսիաների ժամանակ:

Բանվորը գործարանում աշխատելով, հասկանալի չե, բաղխվում ե տասնապետի, վարպետի, արհեստանոցի պետի հետ: Կապիտալիստական արտադրության պայմաններում վարպետի և բանվորի շահերը միշտ իրար հակադիր են: Վարպետն ուզում ե իրն ավելի եժան պատրաստել, քան այն իրօք արժե: Բանվորն ուզում ե ավելի ստանալ: Այդ հողի վրա միշտ տեղի եյին ունենում ընդհարումներ: Վորքան ել թեկուզ բանվորը ձգտեր իրեն համեստ պահել, չլղայնացնել վարպետին ու համարադասիան մեծավորին, այնուամենայնիվ առօրյա աշխատանքներում նա չեք կարող խուսափել այդ ընդհարումներից, իսկ յերբ վրա յե հասնում ճրջնաժամը կամ դեպրեսիան, բանվորը հիշում ե վարպետի հետ ունեցած այդ ընդհարման մասին և սպասում նրանից պատիժ ու հեռացում: Ամեն րոպե աշխատանքից հեռացված լինելու այդ դիտակցութունը մի պատուհաս եր բանվոր դասակարգի համար և ստիպում եր նրան շարունակ զդատ լինել, միշտ հաչիլ առնել վարպետին, կշարդատել իր ամեն մի գործողութունը: Այդպես եր ցարական Ռուսաստանում, այդպես ե կապիտալիզմի տիրապետության յերկրներում:

Բոլորովին այլ դրություն և մեզ մոտ, Խորհրդային Միության մեջ, վորտեղ չկա մարդու շահագործում մարդու կողմից, վորտեղ լիովին վոչնչացված և գործազրկությունը, վորտեղ բանվորն ու վարպետը հետապնդում են միևնույն նպատակը—վորքան կարելի յե լավ ծառայել սոցիալիզմի գործին:

Այն գիտակցությունը, վոր յես գործարանում մշտական բանվոր եմ, այն գիտակցությունը, վոր յեթե մի գործարանում այս կամ այն պատճառով աշխատանքը պակասի, ինձ կիտխաղբեն մի այլ գործարան, մշտականության գիտակցությունը, այն գիտակցությունը, վոր կոլեկտիվը կարիք ունի իմ աշխատանքին,—մարդուն ինքնուրույն և դարձնում, բարձրացնում և նրա կենսագործունեությունը, հնարավորություն և տալիս բանվորին միանգամայն հանդիսարկերպով իր ազատ ժամանակը նվիրելու հանդուտի, զվարճությունների, իր կուլտուրական մակարդակի բարձրացմանը, հասարակական-քաղաքական կազմակերպությունների աշխատանքներին:

«Բանվորն ու կուլտուրականը լիովին վստահություն ստացան վաղվա որվա նկատմամբ, և իրենց գործազրած աշխատանքի քանակից ու վորակից և միայն կախված նրանց կյանքի նյութական ու կուլտուրական մակարդակի ավելի ու ավելի բարձրացումը: ԽՍՀՄ աշխատավորի համար անհետացավ գործազրկության, աղքատության ու սովի սպառնալիքը: Վստահորեն ու բերկրալից և նայում ամեն մի բանվոր ու կուլտուրական իր ազազային, ավելի ու ավելի բարձր պահանջներ ներկայացնելով գիտությանն ու կուլտուրային»<sup>1)</sup>:

Սոցիալիստական Մեծ հեղափոխության այս նվաճումն իր կնիքն և դնում ամբողջ բանվոր դասակարգի վրա, փոխում և նրա բնավորությունը, թերահավատ և վաղվա որվա նկատմամբ անվստահ մարդուց բանվորը դառնում և ալտիվ լավատես: Այս կարելի յե նկատել անթիվ—անհամար որին նակներով:

Բայց մեր բանվորների լավատեսությունը վոչ մի առնչություն չունի այսպես կոչված «միջին ամերիկացու» լավատեսության հետ, վորն իր կենսական բոլոր պլանները կառուցում և բախտի վրա, անհավատալի դեպքի վրա, անսպասելի յերջանկության, բարենպաստ դասավորվող հանդամանքների վրա: Հարկավոր և արդյոք ասել, վոր այս հույսերը մեծ մասամբ հանդիսանում են միմիայն դատարկ յերևակայություն, վորն անգթորեն վոչնչացնում են կապիտալիզմի պայմանները: Խորհրդային բանվորի լավատեսությունն ավելի քան հիմնավորված և, վորովհետև դարդխում և խորհրդային իրավակարգի բուն և յությունից, դաժպում և այն բանից, վոր առանձին բանվորի բարորության համար մեզնում շահագրգռված և ամբողջ կոլեկտիվը, ամբողջ բանվոր դասակարգը: Այդ լավատեսությունն ամբարպնդված և ԽՍՀՄ Ստալինյան սահմանադրությամբ.— «ԽՍՀՄ քաղաքացիներն ունեն աշխատանքի իրավունք, այսինքն՝ ապահովված աշխատանք տանալու իրավունք, նրանց աշխատանքը վարձատրելով նրա քանակի ու վորակի համապատասխան»: Ի՞նչ լավատեսություն կարող են ունենալ կապիտալիստական յերկրների բանվորները, յեթե նվազեցրած պաշտոնական սովյալներով ԱՄՆ—ում կապիտալիստական ամենապահանջ յերկրում—ավելի քան տաս միլիոն մարդ կա գործազուրկ: Գերմանիայում գործազուրկները բանակը հաշվում և 3,5 միլիոն, Անգլիայում—2 միլիոն, Լեհաստանում —367 հազար:

Սոցիալիստական Մեծ հեղափոխությունը ուստական բանվորին բերեց աշխարհում ամենակարճ աշխատանքային ուրը—յոթ ժամյա աշխատանքային ուրը: Այս հսկայական նվաճում և, վորի նշանակությունը դժվար և դերադրահատել: Արտագրության մեջ ընդամենը յոթ ժամ զբաղված լինելով՝ խորհրդային բանվորն իր արամադրության տակ ունի 17 ժամ՝ քնելու, անձնական ու հասարակական կյանքի համար: Այս նշանակում և, վոր բանվորը բավականաչափ ժամանակ ունի իր քաղաքական և կուլտուրական մակարդակը բարձրացնելու համար. այս նշանակում և, վոր բանվորը կարող և բավական ժամանակ նվիրել իր ընտանիքին. այս նշանա-

1) Համ(բ)Կ XVII համագումարի բանաձևերը, էջ 6, Կուսհրատ 1934 թ.:



կում և, վոր բանվորը բավականաչափ ժամանակ ունի հետևելու իր յերեխաների կուլտուրական զարգացմանը:

Այս բոլորից զրկված էլին ցարական Ռուսաստանի բանվորները: Զրկված են դրանից նաև ամբողջ կապիտալիստական աշխարհի բանվորները:

Յարական Ռուսաստանի բանվորները զավակները, վորպես կանոն, հսկողութունից զուրկ էլին, իրենց ազատ ժամանակն անց էլին կացնում բանվորական թաղամասերի կեդրոտոտ հետնախորշերում, լրացնելով քրեական հանցագործների շարքերը: Իսկ քիչ մեծանալուց հետո, դեռ դպրոցը չավարտած, գնում էլին գործարաններն ու Փարբիկաները վորպես աշակերտ աշխատելու: Յարական Ռուսաստանի բոլոր բանվորները մի յերբորդը սկսել է աշխատել գործարաններում և Փարբիկաներում՝ տասներկու տարեկան չդարձած (նրանցից 10% Փարբիկաներն է գնացել դեռևս 10 տարեկան ել չդարձած): Բանվորների մյուս յերբորդը մասը սկսել է աշխատել 12—14 տարեկան հասակում: Յեղ բանվորները միայն մի յերբորդը սկսել է աշխատել տասնհինգ տարեկան հասակից:

Այս ամենը հավիտենականության դիրկն է անցել: Այժմ աշխատավորների զավակները հնարավորութուն ունեն կուլտուրայես սպասարկված լինելու: 1937 թվին ՍՍՀՄ միջնակարգ և տարրական դպրոցներում սովորում է մոտ 30 միլիոն յերեխա: ՍՍՀՄ քաղաքացին բոլորովին հանդիստ է իր յերեխաների ուսման վերաբերմամբ: Դրա համար կան ճրի դպրոցներ, ուր նա որենքով նույնիսկ պարտավոր է ուղարկել իր յերեխաներին: Ամեն մի յերեխայի հետագա ուղին ամբողջապես կախված կլինի նրա ընդունակութուններից և հակումներից:

Այս մեղ մոտ դրամի չի վերածվում, այս պարզապես չի հաշվառվում բանվորի բյուջեյում, իսկ մինչդեռ այս պետական ծախսերի մեջ հսկայական հոդված է: Բավական է ասել, վոր հին Ռուսաստանում միջնակարգ դպրոցի ուսման վարձը համեմատաբար բարձր չէր, և այնուամենայնիվ մի յերեխայի ուսուցումն արժենում էր տարեկան 250 ռուբլուց վոչ պակաս՝ վորակյալ բանվորի ամսական 40—45 ռուբլի

միջին աշխատավարձի ժամանակ: Այստեղից հատկանալի յե, թե ինչու միջնակարգ ուսումնական հաստատություններում բանվորների յերեխաներ համարյա թե չկային:

Սոցիալիստական հեղափոխության վոչ փոքր նվաճումներից մեկն է բանվորների ապահովագրումը հիվանդության, անաշխատունակության և ծերության դեպքերում: Ի՞նչ է նշանակում ճրի բժշկական ողնութուն: Յես վորակյալ բանվոր էլի, իմ վաստակը բանվորի միջին աշխատավարձից բարձր էր: Մի անգամ յես հիվանդացա գործարանում: Յերկու ամիս պառկած էլի հիվանդ և այդ ժամանակվա ընթացքում ապահովագրական դանձարկից ստացա ընդամենը 15 ռուբլի, մինչդեռ իմ ոտձիկից սրհում էլին ապահովագրման 11½%: Ավելացրեք դրան բժշկի վարձը, դեղերի արժեքը, և ձեզ համար պարզ կլինի, թե ինչպիսի դրության մեջ ընկա յես, վորակյալ բանվորս: Հիվանդության 2 ամիսը, ինչպես առաջ ասում էլին, ինձ իստակ քամեցին:

Վերցնենք նյութական ապահովումը ծերության և աշխատունակությունը կորցնելու դեպքում: Քանի դեռ մարդ յերիտասարդ է, ուժեղ է, նա այդ հարցով չի հետաքրքրվում: Հին Ռուսաստանում այսպես էր լինում — վորակյալ բանվորն ստանում էր համեմատաբար վոչ վատ աշխատավարձ: Բայց ահա նա ծերացավ: Ի՞նչ կարելի յեր անել: Յեթե նա գործարանում յերկար տարիներ էր աշխատել, յեթե նրան համարում էլին գործարանային վարչության հավատարիմ ծառա, ապա նրան վորակյալ աշխատանքից փոխադրում էլին կամ պահակի կամ արհեստանոցի հավաքարի պաշտոնի: Դրա համեմատ, իհարկե, պակասում էր նաև նրա աշխատավարձը: Սակայն չե՞ վոր այսպիսի դրության արժանանում էլին միմիայն «յերջանիկները», միայն նրանք, վորոնց հատուկ բարյացակամությամբ էր վերաբերվում վարչությունը: Իսկ ծերունիների մեծ մասն արձակվում էր աշխատանքից: Կապիտալիստի համար բացարձակապես միևնույն է, թե ինչպես կապրի իր արձակած բանվորը, այն բանվորը, վորը 30—40 տարիների ընթացքում հարստացնում էր իրեն: Հեռացված բանվորն իր ծերունի գոյությունը քարչ էր տալիս կամ իր զավակների ոժտնդա-

կուլթյամբ, յեթե նրանք փոքրիշատե ապահովված ելին լի-  
նում, կամ թե ուղղակի մի կերպ գլուխը պահում եր և  
մինչև իսկ մուրացկանութուն անում:

Այդպես եր վոչ միայն նախկին ցարական Ռուսաստա-  
նում, այդ տեղի յե ունենում նաև այժմ ամբողջ կապիտա-  
լիստական աշխարհում: Վորչափ ավելի զարգացած է կա-  
պիտալիզմը, այնքան էլ ըստ տարիքի ավելի շուտ է դուրս  
չպրտվում գործարանից բանվորը, վորպես շահագործման  
համար քիչ պետքական մի առարկա: Ահա ձեզ բանվորի կա-  
պիտալիստական «ապահովվածութունը» նրա ձեռութեան  
ժամանակ:

Այլ գրութուն է մեզ մոտ: Ամեն մի խորհրդային ազ-  
նիվ քաղաքացի որենքով ապահովվում է իրեն պատկանող  
կենսաթոշակով: Պարզ է, վոր այս փաստերից յեկնելով,  
կապիտալիստական աշխարհի և մեր մարդկանց հոգեբանու-  
թյունը բոլորովին տարբեր են իրարից:

Ճիշտ է, մեզ մոտ էլ կան «խելոքներ», վորոնք, համե-  
մատելով մեր բանվորի բնակարանն ու սնունդը ամերիկացի  
բանվորի բնակարանի և սննդի հետ, ասում են, վոր ամե-  
րիկացի բանվորն ավելի միս է ուտում, ունի ավելի լավ  
բնակարան: Յես ընդունում եմ, վոր Ամերիկայի բանվոր  
դասակարգի ամենագործունյա մասը իր ուժերի ծաղկման  
չըջանում դուրս ավելի շատ շոկոլադե և ուտում, քան ուսա-  
կան բանվորը: Բայց չե՞ վոր պետք է հաշվել վոչ միայն  
շոկոլադի կտորները, պետք է հաշվել և այն հակայական  
նյութական-կուլտուրական սպասարկումը, վոր ունեն Սոր-  
հրդային Միության աշխատավորները՝ հանգստի տներ,  
սանատորիումներ, մանկապարտեզներ և մանկամսուրներ,  
արձակուրդներ հղիության պատճառով և այլն: Սրան պետք  
է ավելացնել հակայական թվով թատրոնական-յերաժշտական  
կազմակերպութունները գործարաններում, ձրի համերգնե-  
րը, եքսկուրսիաները և այլն, և մենք կտեսնենք, վոր յեթե  
այս բոլորը դումարենք մի տեղ, ինչպիսի հակայական տար-  
բերութուն կա ՍՍՀՄ բանվոր դասակարգի գրության մեջ՝  
համեմատած վորևէ կապիտալիստական յերկրի բանվոր դա-  
սակարգի գրության հետ: Պատահական չէ, վոր մեր բոլոր

թատրոնները լեփ-լեցուն են լինում: Ի՞նչ է վկայում այդ:  
Այդ վկայում է Սորհրդային պետության աշխատավորական  
մասսաների նյութական ունեւորության զգալի բարձրացման  
մասին, այդ վկայում է մասսաների կուլտուրական պահանջ-  
ները բացառիկ աճման մասին: Այդ վկայում է այն մասին,  
վոր մեր աշխատավորական մասսաները դառնում են աշխար-  
հի ամենակուլտուրական մասսաները:

Այս բոլորը Մեծ Հոկտեմբերյան սոցիալիստական հեղա-  
փոխության հաղթանակները արդյունքն է: Այս բոլորը բան-  
վորներին տվեց խորհրդային իշխանութունը: Սորհրդային  
իշխանութունը բանվոր դասակարգին Սորհրդային Միու-  
թյան ունեցած բոլոր հարստությունների տերը դարձրեց:  
Նյութական և կուլտուրական արժեքների զարգացման ամեն  
մի առաջադիմական քայլը դառնում է աշխատավոր մասսա-  
ների սեփականութունը: Վորքան ավելի յե զարգացած կա-  
պիտալիզմը, այնքան աղքատ, անապահով է դառնում բան-  
վորը: Վորքան ավելի հզոր և հարուստ է դառնում մեր  
հայրենիքը, այնքան ավելի ունեւոր և կուլտուրական է դառ-  
նում աշխատավոր մասսաների կյանքը:

Ահա թե ինչ է տվել ժողովրդին խորհրդային իշխանու-  
թյունը: Ահա թե ինչումն է խորհրդային իշխանության ու-  
ժը: Ահա թե ինչու բանվոր դասակարգը, լինելով ստեղծո-  
ղը, կազմակերպիչը և գլխավոր մարտիկը, հանուն խորհրդ-  
ային իշխանության, ամբողջ իր հզորությամբ ամուր պա-  
հում է և աչալուրջ պահպանում իր խորհրդային իշխանու-  
թյունը:

## ԿՈԼՏԵՆՏԵՍՍԿԱՆ ԳՅՈՒՂԱՅԻՌԻԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐԻՄ ՀԵՆԱՐԱՆՆ Ե

Սորհրդային իշխանության համար մղած պայքարին,  
նրա ստեղծագործական ուժերի զարգացմանը բանվոր դա-  
սակարգի հետ միասին մասնակցութուն է ցույց տվել և  
գյուղացիութունը: Սորհրդային իշխանության ամենավո-  
խերիմ թշնամիները հույս ունեյին, վոր Սորհրդային Միու-

Թյան գյուղացիութիւնը, վորը բաղկացած է զլիսավորապէս մանր սեփականատերերից, չի գնա բանավոր դասակարգի հետեւից, չի գնա կոմունիստական կուսակցութեան հետեւից, վոր կոլեկտիվացման անցնելիս նա չի հաշտվի արտադրութեան միջոցների մասնավոր սեփականութիւնը կորցնելու հետ և կգնա խորհրդային իշխանութեան դեմ: Այս նոմերը չանցավ: Այժմ արդեն նույնիսկ յերեխայի համար ել պարզ է, վոր գյուղացիութիւնը կոմունիզմի պայքարի գործում դարձել է բանավոր դասակարգի ընկերակիցը:

Կապիտալիստները կոմունիզմից վախենում են, ինչպէս ստատանան խնկից, և իրենց յերկյուզը ուզում են տարածել աշխատավոր մասսաների, առանձնապէս գյուղացիութեան վրա: Վո՛չ: Կոմունիզմը զարեւի յե միայն կապիտալիստների համար, իսկ աշխատավոր մասսաների համար կոմունիզմը ջահ է, փարոս է, վորը ցույց է տալիս կապիտալիստական ստրկութիւնից նրանց դեպի ազատագրում տանող ուղին: Այս մասնավորապէս ցույց տվեց և խորհրդային գյուղացիութիւնը, վորը հաստատապէս և անդառնալիորեն կանգնեց կոլտտեստական կյանքի ուղու վրա:

Լենինը «Սոցիալ-դեմոկրատիայի ազդարային ծրագիրը 1905—7 թվականների ուսական առաջին հեղափոխութեան ժամանակ» վերտառութեամբ իր գրքում գրել է. «10 միլիոն գյուղացիական տնտեսութիւններն ունեն 73 միլիոն դեսյատին հող, 28 հազար ազնվագարմ և փնթի լենդլորդերը՝ 62 միլիոն դեսյատին: Այսպիսին է հիմնական Փոնը այն դաշտի, վորի վրա ծավալում է գյուղացիական պայքարը հողի համար»<sup>1</sup>:

Շատ բան է տվել խորհրդային իշխանութիւնը գյուղացիութեանը, վորը դարերով զրկված է յեղել, անդուստ պապականների, կալվածատերերի և գյուղական կուլակ-ցեցերի ձեռքով: Գյուղացիական շատ զավակներ են վոչնչացել հողի համար մղվող դարավոր պայքարում: Բայց միայն խորհրդային իշխանութեան որով գյուղացիներն իրենց

<sup>1</sup> Լենին, հատ. XI, էջ 337:

նպատակին հասան, ստանալով ավելի քան 150 միլիոն հեկտար նախկին կալվածատիրական, պետական և վանքապատկան հողեր: Այդ հողը կարելի յեղավ ստանալ միայն այն բանի հետեւնքով, վոր բանվորներն ու գյուղացիները վոչնչացրին կալվածատերերի և կապիտալիստների իշխանութիւնը, ջախջախելով նրանց ուղղի դաշտերում:

Յեթե 150 միլիոն հեկտարի արժեքը վերածենք դրամի, ապա այդ կկազմի միլիարդներ՝ խլիված կապիտալիստներից և կալվածատերերից, վորոնք իր ժամանակին կողոպտել են գյուղացիներին: Սակայն բանը միայն այդ գումարը չէ: Ի՞նչ է նշանակում՝ գյուղացիներն ստացել են ավելի քան 150 միլիոն հեկտար կալվածատիրական, պետական և վանքապատկան հողեր: Այդ նշանակում է, վոր գյուղացիներն իրենց վրայից թոթափել են կալվածատիրական շահագործման կապանքները, թոթափել են իրենց վրայից կալվածատերերի և կուլակների ամենորոյա ճնշումը: Չե՞ վոր շնորհիվ այդ հողի կուլակները և կալվածատերերը գյուղացուց են դրել էյին կյանքի անտանելի պայմանների մեջ: Ընչման ձեռքը, կուլակների և կալվածատերերի կողմից այդ հողերից ոգուտ քաղելը յեղել են անվերջ բազմադան: Կալվածատերը լճակ ունի. այդ լճակից ոգտվում է գյուղի տավարը: Դրա դիմաց գյուղացիները պարտավոր էյին աշխատել կալվածատիրոջ համար: Այն հողամասը, վորի վրայով գյուղացիներն իրենց դաշտերն են քշում անասուններին, գտնվում է հենց կուլակի հողամասի վրա, — բարեհաճիր դրա համար վճարել կուլակին: Կալվածատիրոջ կամ կուլակի հողամասը հասնում է մինչև գյուղացիական խրճիթները: Պատահամբ այդ հողամասն է ընկնում գյուղացու համը՝ բարեհաճիր նաև դրա համար վճարել:

«Գյուղացուն հասցրել էյին մուրացիկի կյանքի մակարդակին. նա ապրում էր անասունների հետ միասին, հագնում էր ցնցոտիներ, կերակրվում թելուկով: Գյուղացին փախչում էր իր հողաբաժնից, յեթե միայն փախչելու տեղ էր լինում, նույնիսկ փրկագնվելով իր հողաբաժնից, հողաբաժնի վերցնել համաձայնողին վճարելով այն մուծումները, վորոնք գերազանցում էյին հողաբաժնի յեկամտից:

Գյուղացիները շարունակաբար սովաճար եյին լինում, տասնյակ-հազարներով մեռնում եյին սովից և համաճարակներից անբերրիութեան ժամանակ, վոր կրկնվում էր ավելի ու ավելի հաճախակի»<sup>1</sup>:

Կարվածատիրոջ տնտեսութեան մոտ լինելը գյուղական խրճիթներին՝ իսկական դժբախտութիւնն էր գյուղի համար: Վորքան ավելի մեծ էր լինում կարվածատերերի թիւն՝ այս կամ այն դավառում, այնքան ավելի ռեակցիոն էր լինում տեղական կառավարչութիւնը: Ամենալավ որինակը կարող էր ծառայել Կուրսկի նահանգը: Այստեղ էր կարվածատերերի ամենամեծ թիւը, առավել աղքատ, անդրադետ, ճնշված ուս գյուղացիութիւնը, հենց այստեղ էր ամենառեակցիոն դեմսովորներից մեկը: Մոտավորապես նույնպիսի պատկեր էր ներկայացնում Ուկրաինան, վորտեղ, խոշոր կարվածատերերը տարեցատարի հազարավոր գյուղացիական ընտանիքների հարկադրում էյին տեղափոխվել Հեռավոր Արևելք և ովկիանոսի մյուս կողմը, Ամերիկա:

Շատ բան է տվել խորհրդային իշխանութիւնը գյուղացիութեանը, վորնչացնելով կարվածատիրոջը և ցեց կուլակին:

Գյուղում կուլեկտիվացում անցկացնելով, խորհրդային իշխանութիւնը լուծել է սոցիալիստական հեղափոխութեան ամենաբարդ խնդիրներից մեկը: Կուլեկտիվացման պրոցեսը շատ դժվար էր: Այդ միանգամայն բնական է: Մարդիկ դարերով ընտելացել էյին վորոշ կենցաղավարութեան, իսկ կոմունիստական կուսակցութիւնը և խորհրդային իշխանութիւնը կանչում էյին նրան դեպի «անհայտը», կուլեկտիվացում էյին մտցնում: Մեզ համար հասկանալի էյին գյուղական մասսաների յերկյուղը, նրանց ծանր մտածմունքները...

Կուլեկտիվացում մտցնելուն հակառակում էյին բոլոր հակախորհրդային տարրերը, ժողովրդի բոլոր թշնամիները, բոլոր նրանք, ովքեր գեթ փոքր հույս ունեյին հին կապիտալիստական իրավակարգի վերադարձի նկատմամբ:

Նրանք քիչ բան չարին կուլեկտիվացման դործի վիժեցման համար:

Այնուամենայնիվ հաղթանակեց առողջ դատողութիւնը, չքավոր և միջակ գյուղացիութեան հավատարմութիւնը բանվոր դասակարգին: Տեղի ունեցավ չքավոր-միջակ մասսաների արմատական շրջադարձը դեպի կոլտնտեսային շինարարութեան կողմը: Կուլեկտիվացումը փայլուն կերպով անցկացվեց: Կուլակութիւնը—կապիտալիստական վերջին դասակարգը—վերջնականապես ջախջախվեց: «Իսկ ի՞նչ է նշանակում այդ: Այդ նշանակում է, վոր առնվազն քսան միլիոն գյուղացի բնակչութիւն, առնվազն քսան միլիոն չքավորների մենք փրկեցինք աղքատութիւնից ու ավերումից, փրկեցինք կուլակային ստրկութիւնից և կոլտնտեսութիւնների շնորհիվ դարձրինք ապահովված մարդիկ»<sup>1</sup>:

Ի՞նչ բան է կուլեկտիվացումը: Վորո՞նք են նրա առավելութիւններն անհատական գյուղացիական տնտեսութեան հանդեպ: Յես կարծում եմ, վոր այժմ ամեն մի կոլտնտեսական ավելի համոզեցուցիչ կերպով, քան յես, կարող է ապացուցել այդ առավելութիւնները: Յես միայն կհիշեցնեմ բոլորին հայտնի ճշմարտութիւնը՝ կուլեկտիվացումը հնարավորութիւն տվեց կոլտնտեսական դարձնելու գյուղի խամոած, վատ մշակվող, խոպան հողերը: Այս մեծ նվաճում է: Այս հաղթութեան պտուղները մենք քաղում ենք այս տարի: Նախնական հաշվումներով մենք այժմ ունենք մոտ 7 միլիարդ փութ հաց: Կարծում եմ, ամեն մի խելամիտ կոլտնտեսական մտիտը ձեռքին կարող է հաշվել, վոր հողի անհատական յեղանակով մշակելու ժամանակ ամենամեծ բերքի տարիներին մենք չէյինք կարող ստանալ այսպիսի բերք: Այս ել հենց բնական է: Չպետք է մոռանալ, թե ինչ է նշանակում հողի անհատական յեղանակով մշակում: Այդ նշանակում է, վոր ամեն մի գյուղացի ամեն մի դաշտում ունի մի քանի հողաչերտ: Մեկը հողը լավ

<sup>1</sup> Լենին, հատոր IV, էջ 101:

<sup>1</sup> Մտալին, Լենինի մի հարցերը, էջ 659, 10-րդ հրատ., Հայկուհրատ, 1935 թ.:

ե մշակում, մյուսը՝ վատ: Մեկի ձին լավն է, մյուսինը՝ անպետք: Ծեր գյուղացիները շատ լավ են հիշում, թե ինչպես նրանք իրարից հող էյին գողանում: Զուր չե, վոր ժողովուրդը այդ հավերժացրել է առածով՝ «Միջնակն ու սահմանը կռիվ են ու նախատինք» («Межи да грани—соров да брани»): Նա, ով առաջինն էր հերկում, հարեանի հողամասից մի շերտ պոկում ու գցում էր իր հողամասի վրա, վորից միշտ տուժում էյին չքավորները:

Կոլեկտիվացումը վոչնչացրեց հողաշերտերի միջև յեղած աղոսները, վոչնչացրեց միջնակները, վորոնք գրավում էյին ամբողջ հողի մոտավորապես 3-ից—5%-ը, մոլախոտերի մշտական բուծարան էյին հանդիսանում: Այնուհետև, մի գյուղացի ցանում է մի տեսակ հաց, մյուսը՝ այլ մտեսակ. մի գյուղացու սերմերը տեսակավոր են, մյուսինը՝ աղտոտ. մեկի հացն արդեն հավաքվում է, մյուսինը՝ դեռ բոլորովին կանաչ է. մեկը վարսակ է ցանում, մյուսը, կողքին՝ կարտոֆիլ: Գյուղական տնտեսություն մեջ յեղած այս խառնաչիտությունը, վորն անհնար էր վերացնել անհատական, մանր տնտեսության որով, գյուղական դաշտերը դարձնում էր անխնամ և սակավ բերքատու:

Կոլեկտիվացումն ստեղծեց բոլոր անհրաժեշտ պայմանները գյուղական տնտեսության մեջ տեխնիկական հեղափոխություն կատարելու համար: Մի՞թե կարելի չէր տրակտորը բանեցնել գյուղացիական նեղ հողամասերի վրա: Մի՞թե կարելի չէր այդ հողամասերի բերքահավաքին գեթ վորևէ չափով գործադրել, որինակ, կոմբայնը: Ընդհանրապես ասած, գյուղացիական անհատական տնտեսությունը հավիտենական արգելակ էր գյուղատնտեսության մեջ մեքենային մշակում մտցնելու գործում: Միայն կոլեկտիվացումը հնարավորություն տվեց հողը կուլտուրապես մշակելու, ոգտագործելով գիտություն և տեխնիկայի բոլոր նվաճումները: Կոլտնտեսային և խորհրտնտեսային դաշտերը միմիայն 1937 թ. ստացան մեկ միլիարդ 200 միլիոն ո. գյուղատնտեսական մեքենաներ, իսկ 1936 թ. գյուղատնտեսական մեքենաչինարարության ամբողջ արտադրանքի արժե-

քը, արակտորաչինարարության հետ միասին, հավասար էր 2 միլիարդ 260 միլիոն ոււրլու:

Կոլեկտիվացման հաղթանակը պատմական հաղթանակ է: Ի՞նչ է տալիս նա ժողովրդին: Նա գյուղացիներին ազատում է մի շարք բացառիկ ծանր ֆիզիկական աշխատանքներից: Բավական է հիշել արորով, կամ այսպես կոչված Ռյադանի դուժմանով հերկելը, կալսումը, հունձը—աշխատանքներ, վորոնք գյուղացիական հսկայական աշխատանք էյին կլանում, տալով վերին աստիճանի ցած արտադրողականություն: Իսկ այսօր մեր դաշտերում աշխատում են 450 հազար տրակտոր և 121 հազար կոմբայն: Գյուղացիական անհատական աշխատանքը հսկայական ժամանակ էր խլում գյուղացուց: Նրա տնային առորյա աշխատանքները հնարավորություն չէյին տալիս գյուղացուն գեթ մի բույս մտածելու իր դրուժյան մասին՝ վորպես պետություն քաղաքացու, մտածելու իր քաղաքական և կուլտուրական մակարդակի բարձրացման մասին: Անհատական աշխատանքը փոքրիկ հողամասի վրա, վաղվա որվա նկատմամբ շարունակ անխտաճ լինելը՝ նեղացնում էյին գյուղացու մտահորիզոնը, սահմանափակում էյին նրա մտավոր շահագրգռությունը, բթացնում էյին նրան: Յեվ գյուղացու այս խղճուկ սեփականությունն ուղում էր ոգտագործել հակահեղափոխությունը:

Սորհրդային իշխանությունն աճեցրել է անվանի կոմբայնավար Կոնստանտին Բորինին, վորն իր կոմբայնով հափաքել է 2 հազար հեկտար հասկավոր կուլտուրաներ: Այդ նշանակում է, վոր Բորինի կոմբայնի բունկերով անցել է ամենաքիչը 180 հազար փութ հացահատիկ: Յեթե յենթագրենք, վոր Բորինի ագրեգատը յուրաքանչյուր ուր հավաքել է 75 հեկտար, ապա դուրս կդա, վոր մի ագրեգատով Բորինը օրական փոխարինել է 950 մարդու, 150 ձիու, 37 քամհարի և 20 ձիու կալսիչների: Սա այն դեպքում, յեթե վոր 75 հեկտարի բերքահավաքը կատարվեր ձեռքով, իսկ կալսումը—ձիու կալսիչներով:

Սորհրդային իշխանությունն աճեցրել է Պետրովին (Կլուչեպկի ՄՏԿ), վորը օրական հավաքում է 23 հեկտար

վուչ: Վուչի այս ամբողջ քանակը ձեռքով պոկելու համար հարկավոր եր գործադրել 230 մարդու ծանր աշխատանք:

Կոլեկտիվացումը գյուղատնտեսութան մեջ մտցրեց առաջավոր տեխնիկա: Կոլեկտիվացումը ամեն մի գյուղացուց պահանջեց ավելի մեծ կազմակերպվածություն և իր աշխատանքի զուգորդումը համագյուղացիների աշխատանքի հետ: Կոլեկտիվացումը նպաստում է գյուղում խորհրդային ինտելիգենցիա ստեղծելուն: Նա առաջ քաշեց գյուղում կոմբայնավարներ, տրակտորիստներ, մեխանիկներ, խրճիթլարբորատորիաների լարբորանտներ, կոլտնտեսությունների նախագահներ, բրիգադիւրներ, գրասենյակային աշխատողներ: Գյուղացին առաջ իրեն անվանում էր հողագործ: Այդ ճիշտ էր: Նա իր քոսոտ ձիու հետ միասին քչիորում էր հողը: Իսկ ա՞յժմ: Ահա մի ուրիշակ. Խորհուրդների Համամիութենական Արտակարգ Համագումարի պատգամավորների թվում 13%-ը տրակտորիստներ էին, 8%-ը—կոմբայնավարներ, 26%-ը— կոլտնտեսությունների նախագահներ, 10%-ը—բրիգադիւրներ, 20%-ը—ողակավարներ, 6%-ը—անասնաբուծական Ֆերմաների վարիչներ, 12%-ը—կով կրթողներ, հորթապահ և խոզ պահող կանայք, 2%-ը—հովիվներ, 3%-ը—թեյ, բամբակ և ուրիշ տեխնիկական կուլտուրաներ հավաքողներ: Մի՞թե սա ցուցանիչ չէ այն բանի, վոր «խորհրդային գյուղացիությունը միանգամայն նոր գյուղացիություն է, վորի նմանը դեռ չի իմացել մարդկության պատմությունը»<sup>1</sup>:

Շնորհիվ կոլեկտիվացման գյուղական կյանքը արագորեն սկսեց նմանվել քաղաքի բնակչի կյանքին, գյուղացու մտահորիզոնը ընդլայնվեց: Վիթխարի չափով աճեց գյուղի ամբողջ կուլտուրան: Առաջներում գյուղացուն անասելի դժվար էր հասնել մարդկային գիտելիքների բարձունքներին: Միակ ուղին—դա չարչիություն ուղին էր, վորով միլիոնավոր գյուղացիներից միայն հատուկենտ մարդիկ էին կարողանում վաճառական դռնալ գուրդություն և ա-

մեն տեսակ խարդախությունների միջոցով: Միջակ գյուղացին միայն յերազել կարող էր վոչ միայն միջնակարգ դպրոցի, այլև ընդհանրապես դպրոցի մասին: Այժմ գյուղը համարյա հավասարվել է քաղաքին—նա ունի վոչ միայն տարական, այլև միջնակարգ կրթության դպրոցների բավականին խիտ ցանց: Մեքենայացված արտադրությունը գյուղում ինքնին նպաստում է նախաձեռնությունների զարգացմանը, գյուղացիների զավակների ինքնավստահությունը դիտություն, տեխնիկայի և արվեստի մեջ: Կարմիր բանակի հրամանատարական կազմում, խորհրդային որպաններում, ձեռնարկությունների ղեկավարման, գյուղատնտեսությունների ղեկավարման գործում գյուղացիները և գեղջկուհիները պատվավոր տեղ են գրավում:

Չէշտ ճանապարհ չի անցել գյուղացիությունն այս քսան տարվա ընթացքում: Մանր սեփականատիրությունից գյուղացին դարձել է կուլտուրական, ունեւոր կյանք ստեղծող կոլեկտիվիստ: Կոլտնտեսությունները գյուղացուն հնարավորություն տվին խորհրդային հսկայական դաշտերի իջարական տերը դառնալու, հնարավորություն տվին ստեղծելու այդ դաշտերում այնպիսի արժեքներ, վոր վոչ միայն չքավորը, այլև նախկին կալվածատերն էլ յերազում չէր տեսել: Գյուղացին դարձավ իսկական տերը, իր սեփական յերջանկությունը ստեղծագործողը: Այս բոլորը տվել է խորհրդային իշխանությունը:

Կոլտնտեսական գյուղացիները հանդիսանում են իրենց հայրենիքի հավատարիմ զավակները, խորհրդային իշխանության ամուր հենարանը:

### ԽՈՐՀՐԳԱՅԻՆ ԻՆՏԵԼԻԳԵՆՑԻԱՆ

Դեռ 1894 թվին Լենինը գրել է այն մասին, վոր ինտելիգենցիայի կազմը բնորոշվում է հետևյալ ձևով.—յեթե հասարակություն մեջ «թաղավորում և ղեկավարում է կապիտալիստը», սպա ինտելիգենցիայի մեջ «սոնն է տալիս կարյերիստների և բուրժուազիայի վարձկանների ավելի ու ավելի աճող ամբոխը<sup>1</sup>...»:

1 Ի. Վ. Ստալին, ԽՍՀ Միություն Սահմանադրության նախագծի մասին, էջ 16, Հայկուհրատ, 1936 թ.:

1 Լենին, Հ. I, էջ 262, Հայկուհրատ, 1930 թ.:

Ինտելիգենցիայի վերին խավերը—խոշոր չինովնիկները, բժիշկները, իրավաբանները—իրենց արժատներով սերտորեն կապված էին խոշոր կապիտալիստական և կալվածատիրական տարրերի հետ: Այդ ինտելիգենցիայի մասին Լենինը կարճառոտ ասում է. նա «ինտուում է միայն նրան, ով իրեն կկերակրի»<sup>1</sup>: Ո՞վ կարող էր նրան կերակրել: Ո՞ւմ մոտ էր նա ծառայութան մտնում: Միանգամայն հասկանալի չէ, վոր տիրող հարուստ դասակարգի մոտ, նրանց պետք է նա ծառայեր—«վորովհետև նրա համար այլ յեղ չկար»<sup>2</sup>:

Մեր հին ինտելիգենցիան կարծում էր, վոր ինքը կանդնած է դասակարգերից վեր և արտահայտում է ժողովրդի շահերն ամբողջութամբ վերցրած: Այդ մասին առաջ շատ էր գրվում: Իսկ ըստ էություն նույնիսկ նրա ամենադեմոկրատիկ մասն արտահայտում և պաշտպանում էր իր բնակչութան մանր-բուրժուական խավերի շահերը: Հասկանալի չէ, դրանով յես չեմ ուզում ասել, վոր ինտելիգենցիան իր միջից չի ավել ժողովրդական գործի համար մարտիկներ:

Մինչհեղափոխական ինտելիգենցիայի հիմնական մասը համակված էր բուրժուական աշխարհայացքով: Հիշեցե՛ք նախկին ինտելիգենցիայի կազմը: Ֆելդշերներ պատահում էին յերբեմն և հասարակ գյուղացիներից կամ բանվորներից, բայց իրենց ֆելդշերական կրթությունը նրանք ստանում էին գնդերում: Գյուղերում նրանց ծաղրանքով անվանում էին «ձիու ֆելդշերներ», «ձիաբույժներ». մանկաբարձուհիներն արդեն մանր-բուրժուական միջավայրից, առավելագույն կուլակային ընդամեններից յեղածներ էին: Ուսուցիչներն իրենց մասսայով առած քահանայների, կուլակների, մանր չինովնիկների և այլոց զավակներ էին: Շատ հազվադեպ էին պատահում ուսուցիչներ միջակ գյուղացու ընտանիքից, ել չեմ խոսում չքավոր ընտանիքի մասին:

Ինտելիգենցիայի այս դեմոկրատիկ մասն իր գրություններ ամենից ավելի յեր կապված գյուղի ունեւոր վերնախավի

հետ: Այդ կարելի չէ յեղրակացնել թեկուզ հետևյալ պարզ փաստից. ամեն մի յեկեղեցական տոնին՝ գյուղի ուսուցիչը, ֆելդշերը, դարբին-տնտեսատերը, ջաղացպանը և մյուսները հավաքվում էին, վորպես կանոն, հարուստ գյուղացիների մոտ:

Ամբողջութամբ վերցրած ինտելիգենցիան շատ հեռու յեր ժողովրդից: Նույնիսկ 70-ական թվականների նարոդովոյեցների վրա, վորոնք «դեռ էին ժողովրդի մեջ», ժողովուրդը նայում էր ինչպես «սպիտակ վոսկրի» ներկայացուցիչների վրա, հավատ չէր ընծայում նրանց՝ ինչպես տիրող դասակարգի միջից յեղածների և առանձին դեպքերում նրանց հանձնում էր իշխանութուններին:

Ռուս ինտելիգենցիայի, առանձնապես նրա դեմոկրատիկ մասի դրությունը, ել չեմ խոսում հին ցարական Ռուսաստանի մյուս ժողովուրդների ինտելիգենցիայի մասին, վոր բերդական էր: Յարական իշխանութան որդաններում և կալվածատիրական ռեակցիոն դեմստվոյում լինելով ստորագաս պաշտոններում, դեմոկրատական ինտելիգենցիան, տեսնելով ժողովրդի հսկայական դժբախտությունները, չէր կարող էյականորեն ոգնել նրան, և մանավանդ վոր իսկական յեղքը չէր իմանում: Նա չէր տեսնում այն դասակարգը, բանվոր դասակարգը, վորը գլխավորել էր պայքարը ցարական ինքնակայութան և ամբողջութամբ առած կապիտալիզմի դեմ: Ռուս դեմոկրատ ինտելիգենտի այդ վողբերգությունը պայծառ չիթի պես անցնում է ամբողջ ուսական գրականութան միջով:

Առավել առաջավոր, հեղափոխականորեն-տրամադրված ինտելիգենցիան անցնում էր ժողովրդի կողմը, իսկ բանվոր դասակարգի հեղափոխական շարժման հետագա զարգացումը նրա լավագույն զավակներին գրավեց մարտնչող պրոլետարիատի շարքերի մեջ, վորը դիտական սոցիալիզմի դադափարների միակ հետևողական մարտիկն է:

Ինտելիգենցիայի զգալի մասի նվիրված լինելը բուրժուական կապիտալիստական իրավակարգին՝ սուր կերպով յերևան յեկավ, յերբ բուլճիկները գրավեցին իշխանութունը: Ինտելիգենցիան լցվում էր եսերների, մենչևիկների և

1. Լենին, հ. I, էջ 197, Հայկուհրատ, 1930 թ.:

2. Ի. Վ. Ստալին, ՆՍՀ Միութան Սահմանադրութան նախագծի մասին, էջ 10, Հայկուհրատ, 1936 թ.:

այլ ամանոյւրական—քաղաքական խմբերի մեջ, վորոնք զենքը ձեռքին կուվում եյին խորհրդային իշխանության դեմ: Ինտելիգենցիայի զգալի, յեթե վոչ մեծ մասը, սարսափով զիմավորեց խորհրդային իշխանությանը:

«Առանց մեզ չեն կարող յուր գնալ»,—մտածում եյին կապիտալիստներին և կապիտալիստական պետությանը ծառայելու սովոր ինտելիգենտները: Սակայն այդ դատարկ յերեակայություն եր: Հոկտեմբերյան հեղափոխության առաջին տարեդարձին նվիրված հանդիսավոր նիստում Լենինը հայտարարեց.—«Ինչպիսի դատարարը պայցուցեց, վոր ինքը կարողանում է առանց ինտելիգենցիայի և առանց կապիտալիստների արդյունաբերություն կազմակերպել»<sup>1</sup>:

Պրոլետարիատի կողմից իշխանությունը գրավելու ժամանակվանից անցել է քսան տարի: Հին ինտելիգենցիան այժմ, իր ճնշող մեծամասնությամբ կանգնած լինելով խորհրդային իշխանության զիրքերի վրա, ազնվորեն, ամբողջ ժողովրդի հետ միասին մասնակցում է սոցիալիստական շինարարությանը: Նրա կողքին աշխատում են բանվոր դատակարարի և գյուղացիության ընդերքից դուրս յեկած, խորհրդային իրավակարգի պայմաններում ձևավորված, տասնյակ և հարյուր—հազարավոր յերիտասարդ մասնագետներ: Այս նոր խորհրդային ինտելիգենցիան որդանապես, սերտորեն և անմիջականորեն կապված է ժողովրդի հետ:

Ինչպիսիք և կոլտնտեսականների զավակները, ավարտելով տարրական դպրոցը, վոչ միայն իրավունք, այլև գործնական հնարավորություն ունեն ուսումը շարունակելու միջնակարգ, այնուհետև և բարձրագույն դպրոցում, վորտեղ ուսանողների վոչ միայն ուսուցման, այլև պահելու ծախսը լիովին վերցված է պետության հաշվին: Մեր յերկրում ամեն մի յերիտասարդ կարող է ընդունվել ԲՈՒՀ, անկախ սոցիալական ծագումից: Միջնակարգ դպրոցը «զերգանց» ավարտողները բարձրագույն ուսումնական հիմնարկներում ընդունվում են առանց կոնկուրսային քննությունների:

<sup>1</sup> Լենին, հ. XXIII, էջ 243:

Մեր ինտելիգենցիան կարիք չունի սարքովի «ժողովրդի մեջ գնալու», քանի վոր նա ինքը ժողովրդի որդանական մասն է հանդիսանում, ապրում է ժողովրդի շահերով և ձգտումներով: Մեր ուսանողը ժողովրդի մեջ չի գնում, այլ արձակուրդներին գնում է իր ծննդավայրը, իր հարազատ միջավայրը: 1937 թվի ամսուր Սարկովի մարդի Նովոսեն-ժարսկու շրջանի Մալայա Պերեչչեպլինա գյուղում հանդես տանում եյին մոտ 50 ուսանողներ—այդ գյուղի կոլտնտեսականների տղաներն ու աղջիկները: Հենց միայն այդ փաստը միանգամայն բավական է հասկանալու համար, թե կուրտուրական ինչպիսի խոր փոփոխություններ են կատարվել մեր ժողովրդի կյանքում, վորը իր միջից առաջ է քաշում իր ինտելիգենցիան:

Համարձակ կարելի չէ ասել, վոր մեր ինտելիգենցիան գտնվում է բացառիկ յերջանիկ պայմաններում: Ամենասերտ կապերով կապված լինելով ժողովրդի հետ, ինտելիգենցիան ժողովրդի հետ միասին մասնակցում է սոցիալիզմի շինարարության, կոմունիզմի գաղափարները կյանքում կիրառելու գործին: Խորհրդային մասնագետը սոցիալիստական շինարարությանը մասնակցում է վոչ միայն վորպես շարքային մարտիկ, այլև վորպես կազմակերպիչ, ղեկավար: Խորհրդային ինտելիգենցիայի ստեղծագործական գործունեյությունը յենթարկված չէ, ինչպես բուրժուական յերկրներում, կապիտալիստների շահամոլությանը: Մեզ մոտ, Խորհրդային յերկրում, նա ամբողջպես ծառայում է ժողովրդի շահերին: Մեր ինտելիգենցիան չզիտե գործադրկություն, մեզ մոտ չկա ինտելիգենտային աշխատանքի մարդկանց ավելցուկ, ինչպես այդ գոյություն ունի կապիտալիստական բոլոր յերկրներում: Ընդհակառակը, մեր պետությունը ձգտում է բոլոր բանվորներին հասցնել ինժեներ-տեխնիկական աշխատողների մակարդակին:

Այդպես է ինտելիգենցիայի—գիտության, տեխնիկայի և գեղարվեստի մարդկանց դրությունը: Միմիայն խորհրդային իշխանության որով ինտելիգենցիան հնարավորություն



ստացաւ լիովին դարգացնելու իր ընդունակութիւնները և անսահմանորեն ծառայելու ժողովրդին :

## ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՍՈՒԹՅԱՆ ՅԵՐԿԻՐ Ե

Ռուսական կայսրութիւնը տարածված եր բազմաթիւ ազգութիւններէջ բաղկացած՝ բազմախիռն ազգաբնակչութիւն ունեցող հակայական տերիտորիայի վրա : Հարյուրավոր տարիներ ընթացքում ցարիզմն անընդհատ իրեն եր միացնում մերձակա հողերը, նվաճված ժողովուրդներին հպատակեցնելով իր տիրապետութեանը : Այս ժողովուրդներին նվաճումը դաժան բնույթ եր կրում : Գյուղացիական լավագույն հողերն առաջին հերթին համիչտակում էին ցարական սատրապներն, իսկ նրանց հետեւից գալիս էին ռուս կապիտալիստները, մանր փերեզակները, վերաբնորդները, ամեն տեսակի շահագործողները, վորոնց առաջին միտքն եր՝ կողոպտել գաղութները :

Ահա ռուսական կոլոնիզատորների «գործունէութեան» բազմաթիւ պատկերներից մեկը :

Յարական միխիստր Կուրոպատկինը 1904 թիւն Հեռավոր Արևելք դնալու ժամանակ բուրյատ-մոնղոլների պատվիրակութիւնը գանգատ ներկայացրեց նրան տեղական իշխանութիւնների կամայականութեան դեմ : Ի պատասխան այդ գանգատի, Կուրոպատկինը պատվիրակութեանը հայտարարեց հետևյալը . «Նկատի ունեցեք, վոր յեթե ձեր ժողովուրդն իրեն վատ պահի, պատասխանատուն դուք եք, իսկ յեթե, աստիճան մի արասցե, ձեր ժողովուրդը հանկարծ մտածի վորևէ ազատ վարմունք թույլ տալ իրեն, հակառակել թագավորի հրամաններին, դիտցեք, վոր դուք բոպեպեպ կ'ընջվեք յերկրի յերեսից : Ձեր հետքն անգամ չի մնա : Ահա տեսեք, այստեղ ինչքան ռուսական դորք կա, իսկ բերել տալ կարելի յե հարյուր հազարներ, և դուք մի ակընթարթում կ'ընջվեք ու կ'ընչնչանաք : Դուք վոչինչ չպետք ե պահանջեք : Դուք կարող եք վորդորմութիւն խնդրել միայն» :

Յարիզմը դաժանորեն ճնշում եր ռուս ժողովրդին, ավել-

չի մեծ դաժանութեամբ հարձակվում եր նա վոչ-ռուս բնակչութեան աշխատավորների վրա : Իզուր չեք, վոր ցարական Ռուսաստանը «ժողովուրդների բանտ» էլին անվանում : Յարիզմը համաձայնութեան մեջ եր մտնում կեղեքված ժողովուրդների տիրող դասակարգի՝ եմիրների, խանների, բեկերի, տեղական խոշոր կապիտալիստների հետ, մոտեցնում եր այդ վերնախավը ցարական դահլին և սոբորջ ծանրութեամբ, ռուս և տեղական ազգային բուրժուազիայի ու կրոնական պաշտամունքի սպասավորների դրամական պարկերի ուժով ճնշում եր ազգային գյուղացիութեանը : Խավարն ու տգիտութիւնը դադախներ, թուրքմենների, ուղբեկների, թուրքերի, չուվաշների և մյուս ժողովուրդների մշտական ուղեկիցներն էին : Իրավազրկութիւնը, անհույս աղքատութիւնը, նորանոր բռնութիւնների մշտական սպառնալիքը, ազգութիւնների միջև կեղեքիչների կողմից արհեստական կերպով հրահրված յերկպառակութիւնները, պաշտամունքի սպասավորների բացարձակ հեղինակութիւնը—ազգային փոքրամասնութիւնների կյանքը դարձրել էին իրոք արցունքի հովիտ :

Հասկանալի յե, ազգային փոքրամասնութիւնների մեջ այս ամենն առաջացնում եր սարսափելի ատելութիւն դեպի ցարիզմը, դեպի նրա չինովնիկները, իսկ նրանց պատճառով և դեպի ամբողջ ռուս ժողովուրդը : Թվում եր, վոր յերբեք չի դա այնպիսի ժամանակ, յերբ այդ ժողովուրդները յեղբայրական սերտ կապերով կապվեն ու ապրեն ռուս ժողովրդի հետ : Իսկ ցարական կառավարութիւնը, ռուս և վոչ-ռուս կալվածատերերն ու կապիտալիստները, վաճառականներն ու առևտրականները, դենբրաշները, չինովնիկներն ու տերտերներն ամեն ինչ անում էին, վորպեսզի հրահրեն ինչպես ատելութիւն դեպի ռուսականը, նույնպես ատելութիւն և անբարյացակամութիւն բոլոր ազգութիւնների միջև : Իրոքին հայտնի յե այն մշտական թշնամութիւնը թուրք և հայ ազգաբնակչութիւնների միջև, վորը պատճառ եր դառնում ջարդերի և տասնյակ-հազարավոր մարդկանց բնաջնջման :

Յարիզմն ու տիրող դասակարգերը ժողովուրդների մի-

ըև թշնամութիւնն հրահրելով, նրանց միմյանցից խորթաց-  
նելով աշխատում եյին ամբասցնել իրենց հիմքերը:

Ճնշված փոքրամասնութիւններէ շարքերում վաղուց ի  
վեր հասունանում եյին տենչեր և հուլասեր իրենց ազատու-  
թյան համար: Քիչ չէին բողոքները, ապստամբութիւն-  
ները ներքին և արտաքին. վրացական, ուկրաինական, հրեա-  
կան, հայկական, բելոռուսական, բուրյատ-մոնղոլական,  
յակուտական և Ռուսաստանի այլ ժողովուրդներէ հեղափո-  
խական շատ մարտիկներ իրենց կյանքը զոհեցին ազատ և  
յերջանիկ կյանքի համար մղած պայքարում: Բայց ազգա-  
յին ծայրերկրներէ ժողովրդական մասսաներէ բոլոր ապրու-  
սամբութիւնները, բողոքները դաժանորեն ճնշվում եյին  
ցարական սատրապներէ կողմից:

«Ռուսաստանի բանվորներն ու գյուղացիներն իրենցից  
թոթափեցին ցարիզմի դահիճներէ և կապիտալի ճնշումը  
չնորհիվ այն բանի, վոր հասկացան իրենց ազատագրական  
ինդիքը և Ռուսաստանի մյուս ազգութիւններէ աշխատա-  
վորներէ հետ միասին ստեղծեցին ամուր յեղբայրական  
դաշինք խորհրդային իշխանութիւնն հաստատելու, սոցիա-  
լիզմ կառուցելու համար մղվող պայքարում»<sup>1</sup>:

Մեծ Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխութիւ-  
նը ջարդեց ցարական Ռուսաստանի բոլոր ժողովուրդներէ  
ուժերը կաշկանդող կապանքները: Աշխատավորները կերտե-  
ցին իրենց սոցիալիստական բազմազգ պետութիւնը—Սոր-  
հըրդային Սոցիալիստական Հանրապետութիւններէ Միու-  
թիւնը, վոչ թէ ժողովուրդներէ ճնշման և բռնութիւն, այլ  
հոժարակամ միավորման ուղիով:

Սորհրդային իշխանութիւնն զոյութիւնն քսանամյակին  
մենք ունենք Սորհրդային Միութիւնն տառացիորեն բոլոր  
ժողովուրդներէ տնտեսութիւնն և կուլտուրայի ծաղկումը:  
Չե՞ վոր դեռևս վոչ-հեռու անցյալում Միլիին Ասիայի, Ան-  
դրկովկասի, Դաղստանի, Չեչենո-ինգուշեթիայի և մյուս-  
ներէ չքավոր գյուղացիութիւնն իր հողը մշակում եր ան-  
հիշելի ժամանակներէ պահպանված պրիմիտիվ գործիքնե-

րով: Մարդկային ուժերի ամբողջ լարվածութիւնն և հսկա-  
յական կորստի առկայութիւնն պայմաններում այդ պրիմի-  
տիվ մշակումը չնչին արդյունք եր տալիս, վորի յերեք  
քառորդը խլում եյին շորթիչները:

Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխութիւնը  
Միութիւնն ժողովուրդներին արթնացրեց դեպի բացառիկ  
ստեղծագործութիւն: Թվում ե, վոր բանվոր դասակարգի  
և գյուղացիութիւնն հաղթանակի հետ միասին դարերի ըն-  
թացքում կաշկանդված ժողովրդական յեռանդը ահռելի ու-  
ժով դուրս պոսթիկաց: Հարյուրավոր գրքեր կարելի յեր գրե-  
լ ամեն մի ժողովրդի ստեղծագործութիւնն մասին:

Նայենք անցյալի գյուղատնտեսութիւնն վրա, այն դաշտե-  
րին և այն անտարբեր մշակմանը, յերբ մարդը կարծես  
անտեսանելի շղթաներով կապված եր իր անշնորհակալ  
դաշտերին: Այժմ այդ դաշտերը և նրանց վրա աշխատողնե-  
րը բոլորովին կերպարանափոխվել են: Բամբակի և հացա-  
հատիկային դաշտերում լավում ե տրակտորներէ ութմա-  
կան հոնդոցը. աշխատանքի ամենապրիմիտիվ գործիքը՝ ա-  
մաչը կարելի յե տեսնել, թերևս, միայն թանգարաններում:  
Կալի յեղրադրվազներով շրջապատված և տարերային ան-  
կարգապահութիւնը դասավորված հողամասերը չնչին ու-  
րախացնում ժողովրդի աչքը, իսկ այժմ ճիշտ պլանավոր-  
ված, իրենց մեծութիւնը գյուղատնտեսական պահանջներին  
համապատասխանող—նրանք անչափ գեղեցիկ տեսարան են  
ներկայացնում: Բայց ամեն բանից գեղեցիկը—այդ դաշտե-  
րում աշխատող ժողովուրդն ե: Դեմքերի ուրախութիւնը,  
չարժումներէ վստահութիւնը, ինտելիգենտութիւնը, յե-  
րիտասարգութիւնը վոչ միայն տարիքի, այլև ժողովրդի  
գիտակցութիւնն մեծ—ահա նկարչի վրձինին արժանի տեսա-  
րան:

Այն ծանր հողը, վորը ժողովուրդներէ շատ սերունդներէ  
մշտական չարչարողն ե յեղել, այժմ դարձել ե ուրախու-  
թիւնն աղբյուր, յերջանկութիւնն աղբյուր, նրա կուլտնտեսա-  
կան աշխատավորներէ հրաշալի կյանքի աղբյուր: Առանց  
մեծ թվերով ծանրաբեռնելու, յես կասեմ միայն, վոր  
հումք-բամբակի արտադրութիւնը 1913 թվին կազմում եր

<sup>1</sup> Մալաուով, Հողվածներ և ճառեր, էջ 223, Հայկուհրատ, 1937 թ.:

7, 4 միլիոն ցենտներ, իսկ 1936 թվին՝ մոտ 24 միլիոն ցենտներ: Առանձին կոլանտեսուսթյունները, վորտեղ ստեղծադարձական ենտուզիազմը գուզորդվում է բարձր տեխնիկայի և գյուղատնտեսական փորձառության հետ, ձեռք են բերում վոչ միայն առաջ շտեսնված հաջողություններ, այլև այնպիսի հաջողություններ, վորոնց վրա մենք էլ ենք զարմանում: Մի մտածեցե՛ք՝ մեկ հեկտարից ստանալ 100 ցենտներ բամբակ: Մեկ հեկտարի բամբակի ճյուղերի վրա դանվում է 600 փութ հումք-բամբակ: Մի՞թե այս ապացույց չէ այն բանի, վոր յերբեմնի ճնշված ժողովուրդը վերջապես ձեռք է բերել իր յերջանկությունը:

Խորը հանրապետություններում, բոլոր ազգային մարդերում զարգացել է արդյունաբերությունը, կառուցվում են Փարբիկաներ և դործարաններ, վորտեղ ուսու ինժեներները, տեխնիկները և փորձառու բանվորների ոգնությամբ աճեցվում են բանվորների ու տեխնիկական ինտելիգենցիայի ազգային կադրեր: Առանձնապես ուրախալի յե նշել, վոր այդ Փարբիկաների և դործարանների դադգյահների մոտ կանգնում են ազգություններից հազարավոր կանայք, վորոնք միայն քսան տարի սրանից առաջ բառացիորեն դեռևս ստրկուհիներ էյին՝ թե՛ վորպես աշխատավորուհի և թե՛ վորպես կին:

Մեծ ու բազմակողմանի յե ԽՍՀՄ ազգությունների ստեղծագործությունը: Գիտության մեջ, տեխնիկայի, գեղարվեստի ասպարեզում՝ ամենուրեք նկատվում է ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրայի աննախընթաց բարգաւաճում: ԽՍՀՄ ազգությունների ստեղծագործությունն առավելապես փայլուն կերպով յերևաց ժողովրդական յերգի մեջ, հսկայական քանակությամբ յերգեցիկ խմբերի, նվազախմբերի, ինքնազործ թատրոնական խմբակների կազմակերպման մեջ: Համարյա բոլոր ազգային հանրապետությունները ունեն իրենց պետական թատրոնները: Յես մանրամասն չեմ խոսի Ուկրաինայի մասին: Նրա կուլտուրան անցել է մոտավորապես նույնպիսի ուղի, ինչպես և ուսս ժողովրդի կուլտուրան: Ուկրաինական ժողովուրդը շատ բան է կրել, ուսս ժողովրդի հետ

միասին նա պայքարել է ինքնակալության դեմ, ուսս ժողովրդի հետ պարտություններ է կրել, հաղթություններ է տարել:

Նույնը պետք է ասել և վրաց ժողովրդի մասին, վորը ուսս ժողովրդի հետ ուս-ուսի տված պայքարել է ցարիզմի, կալվածատերերի և կապիտալիստների դեմ: Վրաց պրոլետարիատը պատվալոր տեղ է դրավում ուսսական հեղափոխական բանվորական շարժման մեջ: Վրացական կուլտուրան դանվում է Յեվրոպայի առաջավոր յերկրների կուլտուրայի մակարդակի վրա: Խորհրդային իրավակարգը նոր, սոցիալիստական բովանդակությամբ հարստացրեց այդ կուլտուրան և հանեց այն ե՛լ ավելի մեծ բարձունքների վրա:

Ղազախստանի, Ուզբեկստանի, Հայաստանի և մյուսների յերգերում, ազգային թատրոնների բեմադրություններում, յերաժշտության, ժողովրդական ստեղծագործության մեջ՝ ժողովուրդները, ասես, խավարչտին բանտից դուրս պրծնելով՝ դեպի ազատ յերկրի պայծառ արևի ճառագայթները, մեծ թափով յերևան են բերում իրենց տաղանդները, գովերգելով ազատ կյանքի բերկրանքը:

Մենք դանում ենք, վոր Խորհրդային Միության սահմաններից դուրս, նույնիսկ ամենաառաջավոր մարդիկ, չեն գնահատել այդ մեծագույն պրոցեսի-ժողովուրդների յեղբայրության ստեղծման ամբողջ խորությունը: Իսկ չե՞ վոր այդ կատարվում է աշխարհում առաջին անգամ: Պատմության մեջ մենք չգիտենք և վոչ մի պետություն, վորտեղ այնպես, ինչպես Խորհրդային Միությունում, ազգությունների միջև զարգացած լինի յեղբայրությունն ու բարեկամությունը: Յեվ զարմանալի բան է՝ սրանից քսան տարի առաջ անխտահությամբ էյին վերաբերվում դեպի այն ամենը, ինչ վոր ուսսական էր, իսկ այժմ Խորհրդային Միության ազգություններն ազահորեն ոգտագործում են ուսսընկերների փորձը, ուսսական արվեստը, գիտությունը և տեխնիկան:

Հակառակ Փաշիգմի, վորն ազգամիջյան ստելություն է հրահրում, Խորհրդային Միության ազգությունների միջև մրցություն է տեղի ունենում: Ամեն մի ազգություն

ձգտում է առաջին տեղը զբաղել՝ բերքատուության, աշխատանքի արտադրողականության, ֆարքիկաներում և գործարաններում կատարվող աշխատանքի եֆեկտիվության ասպարեզում: Ամեն մի ազգային թատրոն ուղում է առաջ քաշվել, առաջին տեղը զբաղել և ցույց տալ իր առավելութուններն ուրիշ թատրոնների հանդեպ: Սպորտի ազգային խմբերն ուղում են առաջինը լինել Փոլտորոլի, տենիսի և այլ ասպարեզներում: Մակայն այս վոչ մի առնչութուն չունի բուրժուական կոնկուրենցիայի հետ: Այս մրցումը վոչ թե խորթացնում է, այլ հարազատացնում է, վոչ թե անջատում է, այլ միացնում է, վոչ թե քանդում է, այլ ցեմենտապատում է Սորհրդային Միության ժողովուրդներին: Ամեն մի ժողովուրդ ուղում է ԽՍՀՄ սոցիալիստական շինարարության մեջ պատվավոր տեղ զբաղել: Ուղբեկատանի ամեն մի բանվոր կամ գյուղացի կասի, վոր ինքը վոչ միայն Ուղբեկատանի քաղաքացի չե, այլ ամենամեծ հրձիվանքով ասում է, վոր ինքը քաղաքացի չե Սորհրդային Միության, վորի մայրաքաղաքն է Մոսկվան:

### ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՏԵՂԾԱԿՈՐԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԵԼՔԸ

Նյութական միջոցների և կուլտուրայի զարգացումն ազգային փոքրամասնութունների մեջ տեղի չե ունենում վոչ անջատ ձևով—դա կատարվում է ամբողջ Միության ժողովուրդների, և առաջին հերթին ողև ժողովրդի մեջ:

Մարդկանց զիտակցութունից ավելի ու ավելի հեռանում, ավանդութունների գիբկն է անցնում հին աշխարհն իր նախապաշարմունքներով, իր հետամնաց տեխնիկայով, անհատական աշխատանքով: Նոր, հասարակական, կազմակերպված աշխատանքում, վորտեղ լայնորեն կիրառվում է նոր տեխնիկան, աճում է նոր կուլտուրան, աճում են նոր մարդիկ, խորհրդային մարդիկ, զիտակից կառուցողներ: Կարելի չե համարձակորեն ասել, վոր Սորհրդային Միության բնակչության հիմնական գործոն մասն իր ճնշող մեծամասնությամբ բաղկացած է խորհրդային նոր մարդկանցից: Այս հաստատվում է պարզ դատողությամբ. 20 տարի

գոյություն ունի խորհրդային իրավակարգը, և այն մարդիկ, վորոնք խորհրդային իրավակարգի սկզբին 15 տարեկան էլին, ներկա մոմենտին 35 տարեկան են դարձել:

Անցած տարիները ինքնին նշանակալից տարիներ են: Այդ տարիները հակայական լարվածութուն ելին պահանջում մարդկանցից: Բավական է հիշել Սորհրդային պետության թեպետ կարճ, բայց խորը բովանդակությամբ լի և դուռնեղ պատմությունը: Սորհրդային նկարիչներն անտարակույս կստեղծեն այս դարաշրջանին արժանի գործեր:

Մեր ստեղծագործության վերելքն այնպիսի առանձնահատկութուններ ունի, վորոնց նմանը չկա վոչ մի ուրիշ յերկրում: Սկսենք թեկուզ այն բանից, վոր մեզ մոտ համարյա ամեն մի գործարանում, ամեն մի կոյտնտեսության և խորհանտեսության մեջ, ամեն մի հիմնարկության մեջ և բնակվարձկոտպների զգալի մասում կան պատի թերթեր, ինքնակրթության, քաղաքագիտություն ուսումնասիրելու խմբակներ, զեղարվեստի ինքնագործ խմբակներ, զբաղանության խմբակներ և այլն: Այդ աշխատանքի մեջ ներգրավված են տասնյակ—միլիոնավոր մարդիկ: Միմիայն այդ փաստերն արդեն վկայում են խորհրդային ժողովրդի կուլտուրականության աճման մասին, վորովհետև խոսքը տասնյակ—միլիոնավոր մարդկանց կուլտուրայի աճման մասին է:

Մի՞թե խորհրդային ժողովրդի կուլտուրայի չտեսնված աճման ցուցանիշը չի հանդիսանում մեր յերկրում ստախանովյան շարժման զարգացումը, վորի մեջ զբված է բանվորների ապագա կուլտուր—տեխնիկական վերելքի կորիզը:

Մի՞թե Ստախանովի, Բուսիգինի, Սմետանինի, Դուսյա և Մարուսյա Վինոգրադովաների, Կրիլոնոսի, Դյուկանովի, Յուսիմի, Մաղայի—մեր ժողովրդական տնտեսության այդ նորարարները—անունները չեն վկայում խորհրդային ժողովրդի կուլտուրայի, քաղաքական զիտակցության աճման մասին: Այս վկայում է այն մասին, վոր յանվոր դասակարգի շերտերում ստեղծվում է հոյակապ արտադրողների ավանգարդ—մարդիկ, վորոնք «կատարելապես տիրապետել են ի-

րենց գործի տեխնիկային և գիտեն տեխնիկայից քամել այն-  
առավելաբար, վոր կարելի յի քանի նրանից»<sup>1</sup>:

Ստախանովյան շարժումը գրավեց և կոլտնտեսային  
գյուղացիութանը: Ո՞ւր հայտնի չեն դաշտերի պանծալի-  
ստախանովականների՝ Մարիա Դեմչենկոյի, Պաշա Անդե-  
լինայի, Մարինա Գնատենկոյի, Պոլադուտինի, Ոսկինի,  
Դարյա Մեչնիկի, Մամլյաքատ Նախանգովայի, Պաշա Կո-  
վարդակի անունները: Կոլտնտեսականների մեջ մրցումը ա-  
ճում է խորն ու լայնորեն: Խորհրդային գյուղի առաջավոր  
մարդիկ պայքարում են կոլտնտեսական դաշտերի բարձր  
բերքատվությունն ապահովելու համար, և մենք գյուղատըն-  
տեսության մեջ ունենք աշխատանքի բարձր արտադրողակա-  
նության հիանալի որինակներ, վորոնք բոլորովին անհնարին  
եյին անցյալում: Ձեջվում է քաղաքի և գյուղի միջև յեղած  
հին դարավոր հակադրությունը: Կոլտնտեսային արտադրու-  
թյունը, գյուղատնտեսական աշխատանքների մեքենայացու-  
մը, քաղաքական-լուսավորական լայն միջոցառումները  
գյուղում պայմաններ են ստեղծում լիովին վոչնչացնելու  
այդ հակադրությունը:

Հաճախ գանդատներ ենք լսում, վոր մեր գրականու-  
թյունը թույլ է: Գուցե մեր գրականությունը թույլ է հա-  
մեմատած այն հսկայական աճի հետ, վորը նկատվում է  
մարդկային գործունեյության մնացած բոլոր վոլորաներում:  
Բայց «մեր գրականությունը հանդիսանում է՝ բոլոր ժողո-  
վուրդների և յերկրների գրականություններից ամենայերի-  
տասարդը: Միևնույն ժամանակ նա հանդիսանում է ամենա-  
գաղափարական, ամենաառաջավոր և ամենահեղափոխական  
գրականությունը»<sup>2</sup>: Այս գրականությունը խոսում է Խոր-  
հուրդների յերկրի ժողովուրդների սոցիալիստական աշխա-  
տանքի մասին, Խորհրդային Միության յերջանիկ կյանքի  
մասին: Նա ծառայում է սոցիալիստական շինարարության

գործին: Մեր գրական յերկերի հերոսները—գրանք նոր  
կյանքի ակտիվ շինարարներն են՝ բանվորները, բանվորուհի-  
ները, կոլտնտեսականները, կուսակցականները, ինժեներնե-  
րը, կոմյերիտականները, պիոներները, տնտեսավարները,  
մեր յերկերի թեմատիկան—այդ մեր յի ժողովուրդու-  
ների ստեղծագործ գործունեյությունն է:

Մե՞թե այս բոլորը չի վկայում այն մասին, վոր ԽՍՀՄ  
գարձել է վոչ միայն առաջավոր արդյունաբերական յերկիր,  
վոչ միայն աշխարհում ամենախոշոր սոցիալիստական գյու-  
ղատնտեսության յերկիր, այլև առաջավոր սոցիալիստական  
կուլտուրայի յերկիր:

Բոլորին հայտնի յի, թե ինչպիսի հաջողություն ունեն  
միջազգային կոնգրեսներում և կոնկուրաներում մեր գիտնա-  
կանները, դաշնակահարները, ջութակահարները, արտիստ-  
ները, յերգիչները, պարողները, վաղողները, լուղորդները,  
չախմատիստները:

Բարձրագույն արտահայտությունն այն բանի, վոր մեր  
կադրերը հաղթահարել են տեխնիկան, վոր մեր յերկիրն ա-  
մեն որ ստեղծում է նորանոր խոշոր կազմակերպիչներ, մար-  
տիկներ, ենտուղիստներ, հերոսներ, հանդիսանում են  
Խորհրդային Միության հպարտ բազենների՝ Չկալովի, Բայ-  
դուկովի, Իելյակովի, Գրոմովի, Դանիլինի, Յումաչեվի հե-  
րոսական թռիչքները:

Իրավունք ունեն մեզ հարցնելու և կհարցնեն՝ ինչո՞վ  
բացատրել աշխատանքի արտադրողականության այսպիսի  
չտեսնված աճը, խորհրդային ժողովրդի կուլտուրայի աճը,  
ստեղծագործության ծաղկումը մեր յերկրում: Մենք կպա-  
տասխանենք ընկեր Ստալինի բառերով՝ «Կյանքը ավելի լավ  
է դարձել, ընկերներ: Կյանքն ավելի ուրախ է դարձել:  
Իսկ յերբ ուրախ ես ապրում, աշխատանքը հաջող է գնում:  
Դրանից ել ստացվում են արտադրական բարձր նորմաները:  
Այստեղից ել առաջ են գալիս աշխատանքի հերոսներն ու  
հերոսուհիները»<sup>3</sup>:

1 Ի. Վ. Ստալին, ձառ՝ արտասանած ստախանովականների Համա-  
միութենական առաջին խորհրդակցությանը, էջ 11, Հայկուսհրատ,  
1935 թ.:

2 Փղանով, Խորհրդային գրականությունը ամենազաղափարական  
և ամենաառաջավոր գրականությունն է աշխարհում, էջ 8, 1934 թ.:

1 Ի. Վ. Ստալին, ձառ՝ արտասանած ստախանովականների Հա-  
մամիութենական առաջին խորհրդակցությանը, էջ 15, Հայկուսհրատ,  
1937 թ.:

Մեծ ե ու գեղեցիկ մեր հայրենիքը—աշխատավորների հա-  
րազատ մայրը դարձած միակ յերկիրն աշխարհում: Ասես  
թե պատմութիւնը հատուցեց նրանց հաղարամյա աշխա-  
տանքները, նրանց կրած դժբախտութիւնները և տանջանք-  
ները ամբողջ անցյալի համար:

Մեր յերկիրը տարածված է սկսած Սասնայալ ովկիա-  
նոսից՝ նրա կղզիներով և սասնայալուց ստեղծ, վոր-  
սեղ բնութիւն հետ պայքարում են խորհրդային հերոսները,  
մինչև բարեբեր հարավի—Սև ծովի ափերը, սկսած լեհական  
և լատվիական սահմանից մինչև Խաղաղ ովկիանոսը:

Տերիտորիայի լայնածավալութիւնը նախորոշել է նաև  
մեր հողում յեղած հարստութիւնների բազմազանութիւնը:  
Հյուսիսը ծածկված է անտառներով, վորոնց վորակը հայտ-  
նի յե ամբողջ աշխարհին: Հյուսիսից դեպի հարավ և արև-  
մուտքից դեպի արևելք, բոլոր ուղղութիւններով ձգվում  
են հաճարի և ցորենի անծայրածիր դաշտերը, վորոնք կարող  
են կերակրել հարյուր-միլիոնավոր մարդկանց: Այդ դաշտե-  
րին միանում են մարդու ձեռքով մշակած ձյունանման բամ-  
բակի հարթավայրերը, թեյի սրանտացիները, խաղողի աշ-  
ղիները և կոլտնտեսային հրաշալի պարտեզներում հասնում  
են մանդարին, նարինջ, կիտրոն—խորհրդային իշխանութիւն  
որով մշակված պտուղներ:

Մեր գետերը, լճերը և մեր յերկիրը շրջապատող ծովե-  
րը լեւի-լեցուն են ձկների հսկայական պաշարով: Լայնա-  
ծավալ դաշտերում և մարգագետիններում արածում են խո-  
չոր և մանր յեղչուրավոր անասունների հոտեր: Մեր յերկրի  
ընդերքը հարուստ է յերկաթի հանքերով, քարածիրով, նավ-  
թով, վոսկով, հանքային պարարտանյութերով և անաս-  
ման քանակութամբ այլ ոգտակար հանքերով:

Տասնյակ-հազարավոր կիլոմետրերի վրա ձգվում են  
յերկաթուղիների սողապատե ուղիները:

Մեր ծովերին ու ջրառատ գետերին խորհրդային մար-  
դիկ միացրին ջրանցքներ, վորոնց վրայով հարավից դեպի  
հյուսիս, արևմուտքից դեպի արևելք և դեպի հետ ուղեոր-

վում են անհամար բեռներ—մարդու արտադրողական աշխա-  
տանքի արդյունքը:

Անտառները, ընդերքի հարստութիւնները, բանվորների  
և կոլտնտեսականների արտադրողական աշխատանքը, տեխ-  
նիկային տիրապետելը հնարավորութիւն տվին լայնորեն  
ծավալելու յերկրում ինդուստրիալ շինարարութիւնը:  
Ստեղծվել են հազարավոր Փարբիկաներ և դործարաններ,  
էլեկտրոկայաններ: Մեր գետերը, ինչպիսիք են Դնեպրը,  
Վոլխովը, վորոնք անցյալում ոգնում էին միայն բեռներ  
փոխադրմանը, այժմ տալիս են ահադին քանակութամբ  
էլեկտրական եներգիւ: Ստեղծված են աշխատանքի նոր ճյու-  
ղեր, վորոնք հին ցարական Ռուսաստանի ուժերից վեր էին:  
Վերստեղծված է մետաղադործական արդյունարբութիւնը,  
վորը անհամեմատելի յե նախկինի հետ. կառուցված են սովտո-  
մորիլային և տրակտորային դործարաններ. ստեղծված է սովի-  
ացիոն արդյունարբութիւն. արտադրվում է սինթետիկ  
կաուչուկ, ստեղծված է քիմիական արդյունարբութիւն,  
վորը տարեցտարի բարձրացնում է կոլտնտեսային դաշտերի  
համար անհրաժեշտ քիմիական պարարտանյութերի արտա-  
դրութիւնը: Այս ամենը, հին ցարական, սղորատուկա աղ-  
քատ Ռուսաստանը, վորտեղ գերակշռում էր գյուղացիական  
պրիմիտիւ աշխատանքը, դարձրեց բարձր դարգացած ին-  
դուստրիալ յերկիր, վորը կոչվում է Խորհրդային Սոցիա-  
լիստական Հանրապետութիւնների Միութիւն:

Հին ցարական Ռուսաստանը մտնում էր մեծ տերու-  
թիւնների կազմի մեջ: Այդ նրան չէր խանդարում նրանց  
հարկատուն լինելու: Սակայն, Ռուսաստանից ահադին շա-  
հույթներ ստացող յերկրներն էլ պարտքի տակ չէին մնում:  
Յարիգմի և ուսս տիրող դասակարգի համար ծանր բոպե-  
ներին այդ յերկրները նրանց ոգնութիւն էին դալիս իրենց  
դրամական պարկով: Այդպես յեղավ 1905 թվին, յերբ  
թվում էր՝ ահա վորտեղ վոր է հեղափոխական բանվոր դա-  
սակարգը և գյուղացիութիւնը մահացու հարված կհասցնեն  
ցարիգմին: Այդ ժամանակ Փրանսական բանկիրները փրկու-  
թիւն հասան իրենց «կլիենտուրային»:

Կապիտալիստական աշխարհի պարագլուխները մեղ,

Խորհրդային Միութեանը, չեն սիրում, իսկ յեթե խղճով  
ասենք, առում են չար ատելութեամբ: Ասենք՝ ատելու պատ-  
ճառներ կան: Առաջինը, մենք գրկեցինք նրանց մեր բան-  
վորներին շահագործելու, մեր հողի ընդերքն ոգտագործելու  
հնարավորութիւնները. յերկրորդը, և այդ գլխավորն է, մենք  
տապալեցինք մեր կապիտալիստներին: Մեզ մոտ իշխանու-  
թեան գլուխ են կանգնած բանվոր դասակարգն ու գյուղա-  
ցիութեանը—որանով իսկ մենք աշխարհի բոլոր աշխատա-  
վորներին որինակ ցույց տվինք, վոր աշխատավորները կա-  
րող են յոլա գնալ առանց կապիտալիստների: Ահա այս բանը  
կապիտալիստները վոչ մի կերպ ներել չեն կարողանում:  
Սրանումն է հենց նրանց ատելութեան հիմքը և միևնույն  
ժամանակ նրանց անասնական սարսափը Խորհրդային Մի-  
ութեան հանդեպ:

Ավագակային Ֆինանսական կապիտալի գինակիցները—  
Փաշիստները, մոլեգնորեն տարված են մի մտքով—կործանել  
Խորհրդային Միութիւնը: Նրանց հրապուրում են մեր յերկ-  
րի հսկայական տարածութիւնները, նրա մշակված դաշ-  
տերը, նորակառույց հիանալի Փաբրիկաներն ու գործարան-  
ները. նրանց գրավում են մեր ընդերքի հարստութիւններն  
ու մեր անտառները. նրանց գրավում են մեր աշխատավոր-  
ների արտադրողական աշխատանքով ստեղծված հարստու-  
թիւնները: Սոված շնագայլերի նման շրջում են այդ դիշա-  
տիչները մեր սահմանների յերկայնութեամբ, ձգտելով մի  
սողանցք գտնել մեր տերիտորիան մտնելու համար: Բայց  
ամուր են մեր սահմանները: Նրանք պահպանվում են մեր  
փառապանծ Կարմիր Բանակի մարտիկներին կողմից: Այս կամ  
այն տեղում պատահամբ մեր սահմանն անցած այդ դիշա-  
տիչների առանձին փորձերը նրանց համար վողբալի վախճան  
էլին ունենում: Մեր մարտիկները անողորմաբար հաշիվ էլին  
տեսնում:

Մեր բանակը, ժողովրդական բանակը, աշարջորեն  
պահպանում է Խորհրդային յերկիրը, նրա խաղաղ սոցիա-  
լիստական աշխատանքը: Յեւ ուրիշ կերպ չեր էլ կարող լի-  
նել: Չե՞ վոր մեր բանակը—այդ՝ կոլտնտեսային գյուղա-  
ցիութեան, բանվոր դասակարգի և ԽՍՀՄ բոլոր ազնիվ քա-

ղաքացիների լավագույն զավակներն են: Աշխարհում և վոչ  
մի տեղ չկա այսպիսի կապ—հարազատութիւն ժողովրդի և  
բանակի միջև: Մեր Կարմիր Բանակը—դա ժողովրդի լավա-  
գույն մասն է: Նա ժողովրդի հետ միասին հաղթահարում է  
ճանապարհին հանդիպող խոչընդոտները, նա ժողովրդի հետ  
միասին հաղթահարում է բնութեան ուժերը, նա ժողովրդի  
հետ միասին նվաճում է կուլտուրա, լավագույն ապագա:  
Նա ժողովրդի հետ միասին, վորպէս նրա անկապտելի մասը,  
անձնվիրաբար պաշտպանում է և կպաշտպանի Խորհրդային  
Միութեան ամբողջականութիւնն ու անձեռնմխելիութիւնը,  
մեր յերկրում բնակվող բոլոր ժողովուրդների յերջանկու-  
թիւնը:

Մեր հայրենիքը սքանչելի յէ: ԽՍՀՄ բոլոր ժողովուրդ-  
ներն անսահմանորեն սիրում են նրան և չեն կարող չսիրել:  
Չե՞ վոր նա յերկրագնդի միակ մասն է, վորտեղ աշխատա-  
վորական մասսաները, բանվոր դասակարգը, գյուղացիու-  
թիւնն իրենց յերջանկութեան տերերն են հանդիսանում. չե՞  
վոր նա միակ յերկիրն է, վորտեղ իշխանութեան գլուխ են  
կանգնած բանվորներն ու գյուղացիները: Կապիտալիստական  
յերկրներում պրոլետարիատը հայրենիք չունի: Այստեղ կա-  
պիտալիստների հայրենիքն է: Խորհրդային Միութիւնը—դա  
աշխատավորների հայրենիքն է: Միլիոնավոր մարդիկ Հոկ-  
տեմբերյան սոցիալիստական հեղափոխութեան որից իվեր  
գտել են իրենց իսկական հայրենիքը, իրենց կրծքով են նրան  
պաշտպանել և պաշտպանում են թշնամիների դեմ մղվող  
կռիւմ: Ի՞նչպէս չսիրենք մենք նրան, ի՞նչպէս չկռուենք  
մենք նրա համար:

Խորհրդային մարդկանց հայրենասիրութիւնն արտա-  
հայտվում է սիրով ու համերաշխ մշակված դաշտերով, հո-  
յակապ կառուցված Փաբրիկաներով և գործարաններով,  
յերկրի հասարակական կյանքին լայն մասսաների ցույց տված  
ակտիվ մասնակցութեամբ, իրենց կուլտուրականութիւնը  
բարձրացնելու ձգտումով: Այս հայրենասիրութիւնը յերևան  
է գալիս ամեն մի կարմիր բանակայինի դիտակցութեան մեջ.  
վոր նրա պահպանութեան տակ մեր հայրենիքը անմատչելի  
յէ Խորհրդային Միութեան բոլոր թշնամիներին համար: Դրա

համար ել ժողովուրդը, փոքրից մինչև մեծը, սրտառուչ հոգատարութիւն և սեր ե ցուցաբերում ղեպի իր կարմիր Բանակը:

Բանվոր դասակարգը և գյուղացիութիւնը իշխանութիւնը վերցրին հռոտված յերկրում, վորտեղ գերակշռում էր ավերված գյուղացիութիւնը, քանդված Փարրիկաներն ու գործարանները: Յերկիրը լեցուն էր ժողովրդի թշնամիներով, վորոնք պատրաստ էին մի արծաթով վաճառելու իրենց հայրենիքը: Արևելքից և Արևմուտքից դալիս էին նրա վրա ստարերկրյա զորքերը, վորոնք ծարալի էին համեղ պատառը պոկելուն:

Քսան տարվա ընթացքում ԽՍՀՄ ժողովուրդները շատ բան են արել: Նրա բոլոր անկյունները մաքրված են ինտերվենտներից, յերկիրը հսկայական չափով աճում է նյութապէս և կուլտուրապէս, վորով և ամբանում է նրա ռազմական հզորութիւնը: Խորհրդային Միութեան ձայնը միջազգային հարաբերութիւնների Վոլիմպոսում ավելի ու ավելի բարձր է հնչում: Այդ ձայնին ավելի ու ավելի ուղադիրականջ են դնում վոչ միայն ԽՍՀՄ թշնամիներն, այլև բաբեկամները—աշխատավոր մասսաները:

ԽՍՀՄ բանվորների և գյուղացիների մեծ յերկիրն է:

### ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԱՎԱՆԳԱՐԻՆ Ե

Հարյուր—հազարավոր մարդիկ հարց են տալիս իրենց՝ վո՞րտեղից են վերցվում Խորհրդային Միութեան ժողովուրդների ներքին ուժերը: Ի՞նչն է նրանց հզոր աճման զրոգապատճառը:

Այդ հարցի պատասխանը շատ պարզ է, ամեն վոք կարող է այն գտնել. դա կոմունիստական կուսակցութիւնն է: Նրա ղեկավարութեան ներքո քառասուն տարուց ավելի պայքարում է մեր յերկրի բանվոր դասակարգը, նրա ղեկավարութեամբ բանվորներն ու գյուղացիներն իշխանութիւնն ձեռք բերին, նրա ղեկավարութեամբ մենք մեր յերկրում հազթեցինք ցարկովին ու կապիտալովին և նրա ղեկավարութեամբ մենք կառուցեցինք սոցիալիզմ: Այն ամենը, ինչ

վոր կատարվում է Խորհրդային Միութեան մեջ, դա կոմունիստական կուսակցութեան ծրագրի իրագործումն է: Կոմունիզմը վոզեւորում և վարակում է մարդկանց մեծագույն պաթոսով, կոմունիզմը վոգեւնչում է Ֆրիդկական հասարակ աշխատանքը, լցնելով այն իւրը գաղափարական բովանդակութեամբ:

Բանվոր դասակարգի և գյուղացիութեան լավագույն գաւախները, աշխատավորների ամենաակտիւ մասը մտնում է կոմունիստական կուսակցութեան մեջ, մտնում է նրա համար, վորպեսդէ պայքարի բանվոր դասակարգի և գյուղացիութեան գործի համար: Յեւ ուրիշ կերպ չի ել կարող վինել:

Կոմունիստական կուսակցութիւնը չունի իր սպեցիֆիկ շահերը, չունի իր հատուկ նպատակները: Նրա շահերը, նրա նպատակները—դա բանվոր դասակարգի և կոյտնտեսային գյուղացիութեան շահերն ու նպատակներն են: Կոմունիստական կուսակցութիւնը ձեակերպում և վորոշում է այն նպատակները, վորոնց պետք է ձգտի ժողովուրդը, կազմակերպում և կենտրոնացնում է այն միջոցներն ու հնարավորութիւնները, վորոնցով կարելի յե համեւ այդ նպատակների իրագործմանը, ղեկավարում է նվաճ խնդիրների կատարումը:

Կոմունիստական կուսակցութիւնը սերտորեն կապված է մասսաների հետ—և չի ել կարող կապված չլինել նրանց հետ: Կոմունիստական կուսակցութիւնը ձգտում է դրված նպատակներն իրագործելու միայն մասսաների հետ միասին, արտահայտելով նրանց շահերը, կազմակերպելով նրանց, պարզաբանելով և ուղղելով նրանց հասնելու այդ նպատակներին: Մասսաների հետ կուսակցութեան սերտ կապի կորուստը կլիներ նաև նրա կոմունիստական բովանդակութեան կորուստ:

Աշխատավոր մասսաները և կոմունիստական կուսակցութիւնը—այդ մի ամբողջութիւնն է: Իզուր չէ, վոր լենինի հիշատակը վոչ միայն ապրում է, այլ ավելի ու ավելի տեղեր է գրավում մարդկանց գիտակցութեան մեջ: Իզուր չէ, վոր Ստալինի անունը միլիոնավոր մարդկանց սրտերում հիացմունք, ուրախութեան և մտերմութեան զգացմունք է



առաջ բերում: Ստալինի հետ, վորպես կոմունիստական դա-  
դափարների արտահայտչի, կապված ե ուսական սոցիալիս-  
տական մեծ հեղափոխութեան առաջընթաց շարժման ամբողջ  
պատմութեանը, նրա հետ են կապված ակնկալութեանները,  
հուշերը և խորհրդային Միութեան ժողովրդական մասսա-  
ների արդեն ձեռք բերած հաջողութեանները: Վորպես ար-  
ձագանդ այդ համաժողովրդական սիրո, հնչում են ընկեր  
Ստալինի խոսքերը՝ «Կարող եք չտարակուսել, ընկերներ,  
վոր յես պատրաստ եմ առաջիկայում ել բանվոր դասակարգի  
գործին, պրոլետարական հեղափոխութեան գործին և հա-  
մաշխարհային կոմունիզմի գործին նվիրելու իմ բոլոր ու-  
ժերը, իմ բոլոր ընդունակութեանները, և յեթե կարիք լինի,  
իմ ամբողջ արյունը, կաթիլ առ կաթիլ»<sup>1</sup>:

Կոմունիստական կուսակցութեանը ջանքն և հանդիսանում  
պատմական այն ուղու, վորով ընթանում են ԽՍՀՄ ժողո-  
վուրդները: Կոմունիստական կուսակցութեանը անվանում  
և, վարակում ե ենտուգիազմով, առաջացնելով մասսայա-  
կան հերոսութեան և նրա գալստիների մեջ բացառիկ սեր  
դեպի սոցիալիստական հայրենիքը:

Խորհրդային Միութեան ժողովուրդները կոմունիստական  
կուսակցութեան ղեկավարութեան տակ պայքարում եին ի-  
րենց լավագույն ապագայի համար: Կոմունիստական կու-  
սակցութեան ղեկավարութեան տակ նրանք այժմ հաղթանա-  
կից հաղթանակ են դնում: Ընկեր Ստալինի ղեկավարութեամբ  
Խորհրդային Միութեան ժողովուրդները կնվաճեն կո-  
մունիզմը:

Յերբ հայացք ես գցում անցած ուղու վրա, վորի սկիզբն  
եր Մեծ սոցիալիստական հեղափոխութեանը, ակամա քեզ  
համակում ե հիացմունքի, զարմանքի զգացմունք աշխատա-  
վոր մասսաների ստեղծագործական ուժերի հանդեպ, նրանց  
հերոսութեան հանդեպ, մեր կուսակցութեան իղեկաների հա-  
մար մղվող պայքարում նրանց ցուցաբերած անսահման

նվիրվածութեան հանդեպ: Այդ ստեղծագործական ուժերն  
ավելի փայլուն կերպով արտացոլված են Խորհուրդների VIII  
Համամիութենական Արտակարգ Համագումարում ընդունված  
ԽՍՀՄ Սահմանադրութեան մեջ: Ժողովուրդն այն անվանում  
ե մեծ Ստալինյան սահմանադրութեան:

Սահմանադրութեան իր հակիրճ ձևակերպումներում  
աշխատավոր մասսաների վրա յե հաստատել, իրավաբանո-  
րեն ամրացրել այն, ինչ վոր նրանք ձեռք են բերել ու նվա-  
ճել են:

Ստալինյան սահմանադրութեան ստեղծումն ու ընդու-  
նումը պատմական մեծ քայլ ե դեպի առաջ ԽՍՀՄ ժողո-  
վուրդների զարգացման գործում, ժողովրդագրութեան  
զարգացման գործում: Մինչդեռ կապիտալիզմի յերկրներում  
կործանվում են դեմոկրատիայի առանց այն ել իրճուկ ձե-  
վերը, իսկ մի շարք յերկրներում դեմոկրատիան բոլորովին  
ճնշված ե և փոխարինված ե Ֆաշիզմով, Խորհրդային Միու-  
թեանը անց ե կացնում ընտրական սիստեմի հետագա դեմո-  
կրատիզացիան, ներդրալելով բանվորներին և գյուղացինե-  
րին պետական կառավարչութեան մեջ, ընդարձակելով բան-  
վոր դասակարգի դիկտատուրայի բազան և դիկտատուրան  
վերածելով «հասարակութեան պետական ղեկավարման ա-  
վելի ձևուն, հետևաբար՝ ավելի հզոր սիստեմի...»<sup>1</sup>:

Ամբողջ խորհրդային իշխանութեանը վերից վար,  
սկսած ԽՍՀՄ Գերագույն Խորհրդից մինչև գյուղական խոր-  
հուրդը, ընտրվում ե ընդհանուր, ուղղակի և հավասար  
ընտրական իրավունքի հիման վրա՝ դադունի քվեարկու-  
թեամբ: Այդ նշանակում ե—ժողովրդական վերահսկողու-  
թեան ուժեղացումը պետական որդանների աշխատանքի վե-  
րաբերմամբ: Այդ նշանակում ե, վոր իշխանութեան ամեն  
մի կրողին հետևելու յեն նրա հաղարավոր ընտրողները: Այդ  
նշանակում ե, վոր իշխանութեան այս կամ այն ներկայա-  
ցուցչի չարարկութեանների, սխալների և աշխատել չիմա-  
նողու համար ընտրողը չի կարող ներքուստ բարոյական իր

1 Ի. Վ. Ստալին, ԽՍՀ Միութեան Սահմանադրութեան նախադի-  
մասին, էջ 38, Հայկուսճրատ, 1936 թ.:

1 «Գրավա», 22 դեկտեմբեր 1929 թ.:

պատասխանատուութիւնը չդրալ նրա համար: Այդ, իր հերթին, ժողովրդական մասսաների մեջ զարգացնում և ամրապնդում է պետականութեան դեմոկրատիզացիան, պատասխանատուութիւնը Խորհրդային սոցիալիստական պետութեան առաջադիմութեան և ամբողջականութեան համար:

ԽՍՀՄ Սահմանադրութիւնը լայնորեն ծախւում է Խորհրդային դեմոկրատիան: Նա չի սահմանափակում քաղաքացու իրավունքները հայտարարելով, այլ ապահովում է այն՝ որինական կարգով: «Ուստի հասկանալի չէ, վոր նոր Սահմանադրութեան նախագծի դեմոկրատիզմը հանդիսանում է վոչ «սովորական», «ընդհանուրի կողմից ճանաչված» դեմոկրատիզմ ընդհանրապես, այլ «սոցիալիստական դեմոկրատիզմ»<sup>1</sup>:

Սահմանադրութիւնը դեմոկրատականացնում է նաև Խորհրդային դատարանը, վորն ընտրվում է ընդհանուր, ուղղակի և հավասար ընտրական իրավունքի հիման վրա՝ զաղտնի քվեարկութեամբ: Խորհրդային իշխանութիւնը ժողովրդի ձեռքն է հանձնում պետական բացառիկ կարևորութիւն ունեցող մի ինստիտուտ, վորն աշխատավորների ճնշման դործիք է ծառայում կապիտալի բոլոր յերկրներում: Այսպիսի բան կարող է անել միայն ժողովրդական իշխանութիւնը: Այս փաստի մեջ պարզորեն արտացոլում է Խորհրդային իրավակարգի ամբողջ սխտեմը:

Շատ ջանք է գործադրել ժողովուրդն իր հողը ոտարբերկրյա ինտերվենաների ձեռքից խլելու համար, շատ արյուն է թափել ցարական վոհմակի դեմ մղած կռիւմ: Բանվորների, դյուղացիների և Խորհրդային բոլոր ազնիվ քաղաքացիների կողմից մեծ ուժ է դրված Խորհրդային պետութեան կառուցման վրա, արդյունաբերութեան և դյուղատնտեսութեան զարգացման վրա, Խորհրդային Միութեան ժողովուրդների կուլտուրայի զարգացման վրա:

Վորպես արդյունք հերոսաբար անցած այս ուղու՝ ժողովուրդն ունի «պատմական փաստաթուղթ, վորը պարզ ու

1 Ստալին, ԽՍՀ Միութեան Սահմանադրութեան նախագծի մասին, էջ 23, Հայկուհրատ, 1936 թ.:

սեղմ, համարյա արձանադրական վոճով, խոսում է ԽՍՀՄ մեջ սոցիալիզմի տարած հաղթութեան մասին, կապիտալիստական ստրկութիւնից ԽՍՀՄ աշխատավորների ազատազրոման փաստերի մասին, ԽՍՀՄ մեջ ծախւում, մինչև վերջը հետևողական դեմոկրատիայի հաղթութեան փաստերի մասին...

Վորպես արդյունք պայքարի ու դրկանքների անցած ուղու՝ հաճելի ու բերկրալի յե ունենալ իր սեփական Սահմանադրութիւնը, վորը խոսում է մեր հաղթութիւնների պտուղների մասին: Հաճելի և բերկրալի յե դիտենալ, թե ինչի համար են մարանչել մեր մարդիկ և ինչպես են ձեռք բերել նրանք համաշխարհային-պատմական հաղթութիւնը: Հաճելի և բերկրալի յե դիտենալ, վոր մեր մարդկանց առատորեն թափած արյունը ապարդյուն չի անցել, վոր այդ իր արդյունքներն է տվել: Դա հոգեպես զինում է մեր բանվոր դասակարգին, մեր դյուղացիութեանը, մեր աշխատավոր ինտելիգենցիային: Դա առաջ է շարժում և բարձրացնում է որինական հպարտութեան զգացմունքը: Դա ամրապնդում է հավատը դեպի մեր ուժերը և մորիլիզացիայի յե յենթարկում նոր պայքարի՝ կոմունիզմի նորանոր հաղթութիւններ նվաճելու համար»<sup>1</sup>:

Ահա թե ինչու համար աշխատավոր մասսաներին մոտ է, թանգ և սիրելի յե սոցիալիստական հայրենիքը: Ահա թե ինչու աշխատավոր մասսաները խանդավառ սիրով են սիրում իրենց առաջնորդ ընկեր Ստալինին:

Կուսակցութեան և նրա առաջնորդ ընկեր Ստալինի դեկալարութեամբ համարձակ քայլերով առաջ, դեպի կոմունիզմ:

1 Ստալին, ԽՍՀ Միութեան Սահմանադրութեան նախագծի մասին, էջ 63, Հայկուհրատ, 1936 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Եջ
Ինչ ձեռք բերին ԽՍՀՄ բանվորները . . . . .	5
Կոլտնտեսական գյուղացիությունը խորհրդային իշ- խանության հավատարիմ հենարանն է . . . . .	15
Խորհրդային ինտելիգենցիան . . . . .	23
ԽՍՀՄ ժողովուրդների բարեկամության յերկիր է . . . . .	28
Ժողովրդական ստեղծագործության վերելքը . . . . .	34
ԽՍՀՄ հզոր տերություն է . . . . .	38
Կոմունիստական կուսակցությունը աշխատավորների ավանգարդն է . . . . .	42

Թարգմ. Ա. Ղարազյուլյան  
 Թարգմանությունը խմբագրել է Բ. Ն. Գավթյան  
 Տեխն. խմբագիր Ս. Խաչատրյան  
 Մրբագրել է Հ. Մանվելյան  
 Կոմպոզիցիոն սրբագրել է Ա. Արովյան

Գլավիլիա № 6592, հրատ. № 555  
 Պատվեր № 58, տիրաժ 15.000  
 Հանձնված է արտադրություն 3/IV 1938 թ.  
 Ստորագրված է ապագրելու 17/IV 1938 թ.  
 Գին՝ 45 կ.

Պետհրատ—քաղաքական գրականության  
 հրատարակչության տպարան, Յերևան, Ալավերդյան № 65



ԳԻՆԸ 45 Կ.

**М. И. КАЛИНИН  
ЧТО ДАЛА  
СОВЕТСКАЯ ВЛАСТЬ  
ТРУДЯЩИМСЯ**

Армгиз—Издательство политической литературы  
ЕРЕВАН, 1938